

DOI: 10.57192/18291864-2022.3-271

Արարատ Մ. Հակոբյան

Պատմ. գիտ. դոկտոր

## ՀԱՅՈՑ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՍԿՋԲՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Իսրայել Օրու կյանքի և գործունեության  
իրական պատմությունը\*

**Բանալի բառեր** – Իսրայել Օրի, Անգելակոթ, Վիեննա, Հովհան Վիլիելմ, Կ. Եզյան, Աշ. Հովհաննիսյան, կուրֆյուրստ, «Պֆալցյան ծրագիր», մելիք Սաֆրազ, Լեոպոլդ 1-ին, Հռոմի պապ, Պարսկաստան, բանագնաց, կողմնորոշում, Մոսկվա, Պետրոս Մեծ, Ֆ. Գոլովին, «Մոսկովյան ծրագիր», Եսայի կաթողիկոս, Հայաստան:

### Մուտք

Հայաստանի պատմական հարուստ ժառանգությունն այսօր էլ գաղափարաքաղաքական ու հոգևոր-բարոյական հզոր կովան է հայ ժողովրդի անժամանցելի իրավունքների պաշտպանության և ազատության ու անկախության ուղով ընթանալու համար:

Հայ ազատագրական պայքարի նվիրյալ Հովսեփ Էմինը դեռ 18-րդ դարում է նկատել, որ «գետնաքարշ մրջյուններն էլ թագավորություն ունեն, իսկ մենք չունենք»<sup>1</sup>, և իր ինքնակենսագրականը եզրափակել **«ազատությունն է կյանքի բոլոր բարիքների աղբյուրը** (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»<sup>2</sup> եզրահանգումով: Հետագայում ՀՅԴ նշանավոր տեսաբան Վահան Նավասարդյանը դրան ավելացրել է. «Անկախութիւնը ազգերի անկապտելի իրավունքն է, նրանց անվերաբննելի ու նւիրական սեփականութիւնը: Անկախութիւնն ազգ-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 31.08.2022:

1 Էմին Հ., Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները, Եր., 2018, էջ 131:

2 Նույն տեղում, էջ 483:

Վե՛մ համահայկական հանդես, ԺՂ (Ի) տարի, թիվ 3(79), հունիս-սեպտեմբեր, 2022

սուրբյեկտի ազատութեան միակ ձևն է, անկաշկանդ ապրելու եւ ստեղծագործելու միակ միջոցը»<sup>3</sup>:

Հայկական վերջին՝ Կիլիկիայի թագավորության անկումից հետո պետականությունը կորցրած և երկու մրցակից բռնապետությունների՝ Սեֆյան (շահական) Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի արանքում հայտնված Հայաստանը դարձել էր նրանց **կովախնձորն** ու պատերազմների **թատերաբեմը**: Շուրջ դարուկէս տևած թուրք-պարսկական պատերազմների հետևանքով հայրենի տարածքների զավթումը, բռնագաղթը, անձի և ինչքի անապահովությունը, հարստահարությունների ու հալածանքների երկար շղթան հայության համար այնքան ողբալի էին, որ 16-րդ դարի ժամանակագիր գրիչներից մեկը գրում էր. «...ն'չ կարենք լեզուաւ պատմել, և ո'չ զաղետն ընդ գրով արկանել»<sup>4</sup>:

Նման պայմաններում հայ հոգևոր և աշխարհիկ գործիչների շրջանում աստիճանաբար խմորվող՝ օտարի լծից սեփական հայրենիքն ազատագրելու խնդրի լուծման համար բզկտված Հայաստանի ու կոտորակված հայ ժողովրդի ներքին ռեսուրսներն ու կարողականությունը բավարար չէին, ուստի աստիճանաբար առաջին պլան էր մղվում **քաղաքական կողմնորոշումների** հարցը: Բայց միայն 17-րդ դարի վերջին ու 18-րդ դարի սկզբներին այն **գործնական հողի** վրա դրվեց Նոր ժամանակներում հայոց ազատագրական ոգորումների սկզբնավորող ու ամենավառ ներկայացուցիչ **Իսրայել Օրու (Յավրի)**<sup>5</sup> (1659–1711) կողմից:

## 1. Իսրայել Օրու գործունեության սկիզբը

Իսրայել Օրու գործունեության հետազոտման առաջնային սկզբնաղբյուրը, որը, փաստորեն, դեռևս հարկ եղած չափով քննության չի ենթարկվել, բանասեր, պատմաբան **Կարապետ Եգյանի (Եզով)** (1835–1905) ընդարձակ առաջաբանից և ավելի քան 300 փաս-

3 **Նավասարդեան Վ.**, Հայաստանի անկախությունը, Ժրնել, 1924, էջ 44-45:

4 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր N 6273, էջ 510: Տե՛ս նաև **Սրվանձույան Գ.**, Թորոս աղբար, հատ. 2, Կ. Պոլիս, 1888, էջ 268-269:

5 **Օրի** անունը լատիներեն և ֆրանսերեն գրություններում հաճախ կարդացվել է **Յավրի** (Jauri): «Մուրճ» ամսագրի մեկնաբանմամբ **Օրի** անունն առաջացել է «որդի» բառից «ո» տառի զեղչումով, և «Իսրայելի որդի»-ն դարձել է «Իսրայել Օրի»՝ իբրև անուն-ազգանուն: Եվ քանի որ Եվրոպայում ընդունված էր կրել ազգանուն, ուստի **Օրի**-ն դարձել է նրա համար ազգանուն (տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1898, N 9 (սեպտեմբեր), էջ 1271):

տաթղթերից կազմված մեծարժեք ժողովածուն է<sup>6</sup>: Կ. Եզյանը Ռուսաստանի արագործնախարարության Մոսկվայի և Ս. Պետերբուրգի արխիվներից, Ավստրիայի պալատական ու պետական, բավարական (Պֆալցի) թագավորական արխիվներից ու այլ հիմնարկություններից հավաքել և ի մի է բերել հիմնականում Իսրայել Օրու կյանքին ու քաղաքական գործունեությանը վերաբերող վավերագրերը և ժողովածուի տեսքով հրատարակել Ռուսաստանի կայսերական գիտական ակադեմիայի տպարանում: Ժողովածուն (675 էջ) բաղկացած է երկու բաժնից: 1-ին բաժինը մի ծավալուն ներածական է՝ հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ համառոտ ակնարկով, հեղինակի կողմից վավերագրերի մեկնաբանություններով ու վերլուծականներով, և էջակալված է հռոմեական թվանշաններով՝ I-CXLV (163 էջ), իսկ 2-րդ կամ հիմնական բաժնում ներառված են Պետրոս Մեծի ժամանակներին և դրանց հաջորդած տարիներին (մինչև 1736 թվականը) վերաբերող 305 վավերագրեր (512 էջ): Փաստաթղթերը՝ գրություն, նամակ, անցագիր, հրովարտակ, զեկուցագիր և այլն, դասավորված են գիտական ժողովածուներին հատուկ ժամանակագրական հաջորդականությամբ, գրված են տարբեր լեզուներով, առանձին դեպքերում տողատակերում տրված են գիտական պարզաբանումներ և այլն: Բայց, չնայած այս արժանիքներին, Կ. Եզյանի կազմած ժողովածուի վավերագրերի մի մասը՝ իբրև հավաստի սկզբնաղբյուր, արժանահավատության առումով կասկածներ է հարուցում: Նախ նշենք, որ, սկսած 1677 թ. Անգեղակոթի ժողովից, դրանում Ի. Օրու կյանքի ու գործունեության հիմնական դրվագները շարադրվել են հետին թվով, հետագայում՝ արդեն կատարված դեպքերի և իրադարձությունների լայն համայնապատկերում: Այստեղից էլ հաճախ ծագում են կասկածներ՝ դրանք իսկապես տեղի՞ են ունեցել, թե՞ ոչ: Կասկած չկա, որ ժողովածուում զետեղված գրություն-նամակների, անցագրերի և այլ նյութերի մի մասը երբեմն կեղծվել է առաքելության գլխավոր դերակատարներ Ի. Օրու ու Մինաս վարդապետի կողմից, ինչի նպատակը, անշուշտ, բռնած գործն առաջ տանելն էր: Մանավանդ որ դրանցով և որպես իրավական հիմք Անգեղակոթի ժողովում հայ մեղիքների կողմից իրենց (պատվիրակությանը)

6 Стѣн Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом. Документы, С. Петербург (СПБ), типогр. Импер. акад. наук, 1898:

տրված գրություն-նամակով նրանք փորձել են օգտվել, այսպես կոչված, «**ձերմակ թղթի**» («քարթ բլանշի») չգրված իրավունքից, ինչը կասկածելի է և ոչ արժանահավատ:

Դառնալով բուն նյութին՝ նախ հարկ է փաստել, որ 17-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանի ազատագրության հարցում մեծ դերակատարը, անշուշտ, «անհայթ փիլիսոփա» և «նաքրամիտ վարդապետ»<sup>7</sup>, Ամենայն հայոց կաթողիկոս **Հակոբ Դ Ջուղայեցին** (1655-1680) էր<sup>8</sup>: Վերջինս իր նախորդների նման թուրք-իրանական մրցակցային շահադիտությունների թնջուկից Հայաստանը դուրս բերելու հնարավոր ուղիները փնտրում էր Եվրոպայում՝ հույսեր կապելով ոչ միայն Հռոմի պապի, այլև եվրոպական պետությունների հետ: Նա, կապեր հաստատելով Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկու, Վենետիկի Հանրապետության և Ֆրանսիայի արքունիքի հետ, Հայաստանի ազատագրության հույսը փորձում էր կապել նաև եվրոպական աշխարհիկ իշխանությունների հետ, և դրանով հայ ազատագրական միտքն ու շարժումը կարծես նոր երանգավորում էին ստանում:

Հայտնի է, որ Հակոբ Դ Ջուղայեցին մտադրություն է ունեցել անձամբ մեկնելու Եվրոպա՝ Հռոմի պապից և քրիստոնյա պետություններից օգնություն խնդրելու համար: Ուստի Հայաստանի սոցիալ-քաղաքական անելանելի վիճակն է թելադրել գաղտնի ժողովի հրավիրումը 1677 թ. գարնանը Մայր Աթոռում՝ 6 բարձրաստիճան հոգևորականների (արքեպիսկոպոսներ) և 6 աշխարհականների՝ Արցախի և Սյունիքի մելիքների<sup>9</sup> մասնակցությամբ: Հայաստանի ազատագրության հարցը կրկին բարձրացնելու համար որոշվում է պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ Հռոմի պապի մոտ՝ «հայերի համար ազատություն հայցելու»: Ուստի իրականությանը չի համապատասխանում պրոֆ. Ա. Աբրահամյանի պնդումը, թե Էջմիածնի ժողովում որոշում են «Հակոբ Ջուղայեցու ղեկավարությամբ պատգամա-

7 Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենը Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի մասին գրում էր, որ նա իմաստուն ծերունի էր՝ ձերմակաետր, ինչպես լուսինը, և պատվարժան կեցվածքով (տես «Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг.», Тифлис, 1902, էջ 278):

8 Տես **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2, Եր., 1959, էջ 164:

9 «**Մելիք**»-ը սենական ծագում ունեցող (արաբերեն) բառ է, որը նշանակում է «իշխան, տիրակալ, թագավոր» (տես **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 3, Եր., 1973, էջ 16, **Մաղայան Ա.**, Արցախի մելիքությունները և մելիքական տները 17-19-րդ դդ., Եր., 2007, էջ 32): Հիշենք, օրինակ, մեր «Սասունցի Դավիթ» էպոսում Սարա Մելիքին: Ըստ էության, «մելիք»-ը վկայում է թագավորական կարգավիճակ ունենալու մասին: Հայ մելիքներն իրենց ենթակա երկրամասերում ունեին շահի ֆարմանով (հրովարտակով) հաստատված կառավարչական, դատավարական, զորք պահելու, հարկեր հավաքելու և այլ իրավունքներ:

վորություն ուղարկել **Ռուսաստան** և Արևմտյան Եվրոպա»<sup>10</sup>: Պատմական իրողությունն այն է, որ պատվիրակության՝ Ռուսաստան մեկնելու մասին որևէ խոսք չի եղել: Կազմվել է պատվիրակություն՝ կաթողիկոսի գլխավորությամբ և 3 եկեղեցականների ու 3 մելիքների մասնակցությամբ<sup>11</sup>: Եվրոպա մեկնող 3 աշխարհիկ պատվիրակներից 2-ը Կապանի մելիքներից էին, որոնցից մեկն էլ Իսրայել Օրու հայրն էր՝ մելիք Իսրայելը: Կ. Եզյանի մեկնաբանմամբ՝ մելիք Իսրայելը՝ իբրև **հայոց Պոռոջյան** իշխանական տոհմից ընտրված աշխարհիկ պատվիրակ, «երկյուղ կրելով պարսկական իշխանությունների հետապնդումներից՝ իր փոխարեն ուղարկում է երիտասարդ (20-ամյա – Ա. Հ.) որդուն՝ Օրիին»<sup>12</sup>: Լեոյի մեկնաբանմամբ՝ երիտասարդ Օրին պատգամավորությամբ մասնակցում էր իր հոր փոխարեն, որը «ծերության պատճառով մնաց տանը»<sup>13</sup>: Ինչ վերաբերում է մելիք Իսրայելի ծագմանը, ապա վաստակաշատ պատմաբանը որևէ կասկած չի հայտնում Իսրայելի՝ Պոռոջյան հռչակավոր իշխանական տոհմից սերելու առումով<sup>14</sup>: Մինչդեռ պատմավավերագիր սկզբնաղբյուրներում և նյութերում չկան բավարար կովաններ՝ հիմնավորելու Օրու նախնիների՝ միջնադարյան Պոռոջյան տոհմից սերված լինելը:

Հայ բազմահարուստ գրականությունից հայտնի է, որ Հակոբ Ջուղայեցու գլխավորած պատվիրակությունը նախ Վրաստանով, որտեղ հանդիպում է վրաց թագավոր Գեորգի 11-րդի և նրա եղբայր Արչիլի հետ, այնուհետև Արևմտյան Հայաստանով 1678 թ. հասել է Կ. Պոլիս: Հակոբ Ջուղայեցին նամակ-ներբող է գրել՝ ուղղված Լեհաստանի (Ռեչ Պոսպոլիտայի)՝ հայերի հանդեպ բարյացակամորեն տրամադրված ու Հայաստանի անկախության խնդրով հետաքրքրված «արդար և փրկիչ» թագավոր Յան Սոբեսկուն (1674-1696)<sup>15</sup>: 82-ամյա կաթողիկոսը Կ. Պոլսում մնում է 8 ամիս և 1680 թ. օգոստոսի 1-ին այնտեղ էլ վախճանվում: Պատվիրակության անդամները Հ. Ջուղայեցու մահից հետո, թերևս հեռանկար չտեսնելով իրենց հետագա անելիքներում, ցրվում են: Եվ միայն **Իսրայել Օրին**, հավանաբար հորից և մյուս պատվիրակներից որոշակի առաջադրանք ստացած, հայ վա-

10 Աբրահամյան Ա. Գ., Իսրայել Օրի, Եր., 1978, էջ 25:

11 Տե՛ս Զոօբ Դ. Ա., նշվ. աշխ., վավ. N 5, էջ 11:

12 Նույն տեղում, էջ XX:

13 Լեո, Երկերի ժողովածու, հատ. 5, Եր., 1986, էջ 331:

14 Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 29-30:

15 Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Ղրվագներ..., գիրք 2, էջ 222:

ճառականների հետ շարունակում է ուղևորությունը դեպի Եվրոպա<sup>16</sup>: Այդպիսով սկսվում է Իսրայել Օրոն՝ հայ պատմագիտական գրականության մեջ հակասական գնահատականներ ստացած արկածալի գործունեությունը: Իբրև հուշապատում հետին թվով շարադրված նրա կենսագրականում ներկայացվում են մի շարք տեղեկություններ: Իսրայել Օրին 1680 թ. Կ. Պոլսից մի խումբ հայ վաճառականների հետ անցել է Իտալիա և Վենետիկում 3 ամիս դեգերելուց հետո մեկնել ու հաստատվել Ֆրանսիայում: Փարիզում ստացել է գինվորական կրթություն և ձեռք բերել որոշ քաղաքական գիտելիքներ, այնուհետև՝ 6 տարի ծառայել Ֆրանսիայի թագավորական բանակում որպես վարձկան սպա (հեծելազորի կապիտան): Այդ ընթացքում որոշակի քաղաքական մտադրությամբ փորձել է ֆրանսիական արքունիքի ու ազդեցիկ պալատականների հետ ծանոթություն ու կապեր հաստատել: Դրա համար Լյուդովիկոս 14-րդի պալատի՝ Վերսալի մոտակայքում բացել է պերճանքի խանութ՝ ակնկալելով արժանանալ Նորին մեծության ընդունելությանը<sup>17</sup>: Սակայն կարելի է ենթադրել, որ, Ֆրանսիայի՝ Թուրքիայի հետ ունեցած առևտրատնտեսական շահավետ կապերով ու հարաբերություններով պայմանավորված, Օրուն չի հաջողվել Վերսալի պալատում անգամ որևէ բանավոր խոստման արժանանալ: Նա դիմումներ է հղել Լյուդովիկոս 14-րդին, սակայն դրանք մնացել են անարձագանք: Հետագայում՝ ֆրանսանգլիական մի պատերազմի ժամանակ՝ 1695 թ., որպես կամավոր զինվոր՝ նա Նամյուր քաղաքում շրջապատման մեջ է ընկել և գերվել անգլիացիների կողմից: Սակայն անգլիական թագավորը, պարզելով նրա ով լինելը, ազատել է գերությունից:

Ֆրանսիայից հույսը կտրելով՝ Օրին անցել է Գերմանիա և ծառայության մտել Հռենոսյան Պֆալցի երկրամասի կենտրոն Դյուսելդորֆ քաղաքում՝ կուրֆյուրստ (փոխարքա կամ կայսրընտիր մեծ իշխան) **Հովհան Վիլհելմի** արքունիքում, և 4 տարի ծառայել որպես բանակի մատակարար: Իր ապրուստն ապահովելու համար նա միաժամանակ նվիրվել է առևտրական գործին, գնել ու վաճառել է պերճանքի տարատեսակ առարկաներ: Ըստ Լեոյի վավերագրերի՝

16 Տե՛ս **Չամչեանց Մ.**, Պատմություն Հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 718, **Ալիշան Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 351:

17 Տե՛ս **Լեո**, Խոջայական կապիտալ, Յեր., 1934, էջ 173:

Դյուսելդորֆում հաստատված Օրին սկզբնական շրջանում զբաղվել է ցորենի և օղու առևտրով<sup>18</sup>:

Կուրֆյուրստին ներկայանալու և իր քաղաքական մտադրություններն արտահայտելու համար Օրին չի ունեցել որևէ հանձնարարական-անցաթուղթ, սակայն մտերմանալով և առիթ ստեղծելով՝ հաջողել է հանդիպումներ ունենալ Հովհան Վիլհելմի հետ: Վերջինս հետաքրքրվել է նրա ազատաբաղձ գաղափարներով և անգամ պատրաստակամություն հայտնել հնարավորության դեպքում օգնություն ցուցաբերելու պարսկական լծից Հայաստանն ազատագրելու համար: Օրու գաղափարներին դրականորեն է մոտեցել նաև Հովհան Վիլհելմի բարեկամ և զինակից, նրա քրոջ ամուսին, Ավստրիայի կայսր Լեոպոլդ 1-ինը: Ի. Օրու ազատագրական գաղափարները, բացի զուտ մարդասիրական կամ այլ (օրինակ՝ փառասիրական) ձգտումներից, որոշակի քաղաքական հետաքրքրություն են առաջացրել գերմանական արքունական շրջանակներում նաև այն պատճառով, որ նրանք մասնակից էին հակաթուրքական պայքարին (պատերազմին):

1698 թ. Օրին փորձում է ավելի գործնական դաշտ տեղափոխել կուրֆյուրստի հետ բանակցությունները՝ հայերի, նաև վրացիների ազատագրության հարցով: Նույն թվականի մայիսին Հովհան Վիլհելմը նամակ է հղում «Հայաստանի իշխաններին և տերերին», բայց և հանդիպումներից մեկի ժամանակ հասկացնել է տալիս, որ «Հայերը չպետք է տարւեն Եւրոպայից օգնութիւն ստանալու յոյսով և պէտք է իրանք տեսնեն իրանց գլխի ձարը»<sup>19</sup>:

Ռազմաբաղաքական իրադարձությունների առումով սա այն ժամանակաշրջանն էր, երբ դեռ չէին սկսվել Թուրքիայի հետ Ավստրիայի հաշտության բանակցությունները: 1698 թ. օգոստոսին Օրին ժամանում է Վիեննա՝ Ավստրիայի Լեոպոլդ 1-ին կայսրի հետ հանդիպելու, բայց կայսրը, ակնարկելով Թուրքիայի հետ 1699 թ. Կարլովից ավանում կնքվելիք մոտալուտ հաշտությունը, դիվանագիտորեն մերժում է Հայաստանին զինական օգնություն տրամադրելու մասին Օրու առաջարկը: Վավերագիր նյութերը վկայում են, որ եվրոպացի իշխանավորներն իրատեսական չեն համարել հայերին ռազմական օգ-

18 Տե՛ս նույն տեղում, էջ 184:

19 Հովհաննիսյան Ա., Հայ-ռուս օրինատացիայի ծագման խնդիրը, Էջմիածին, 1921, էջ 55:

նության ցուցաբերումը: Բայց ահա Հովհան Վիլհելմը, հավանաբար քրիստոնեական և մարդասիրական մղումներից դրդված, պատրաստականություն է հայտնում ռազմապես օգնելու հայերին, եթե դրա համար լինի հայ հոգևոր և աշխարհիկ ղեկավար շրջանակների պաշտոնական դիմումը: Եվ Օրին համապատասխան նամակ-հանձնարարականներով, այդ թվում՝ 1698 թ. մայիսի 3-ի ամսաթվով Դյուսելդորֆում Հ. Վիլհելմի գրած նամակով, ավելի քան 20-ամյա ընդմիջումից հետո Կ. Պոլսով վերադառնում է հայրենիք: Իր նամակում կուրֆյուրստը կոչ էր անում հայ մելիքներին ազատագրվելու պարսկական տիրապետությունից, միաժամանակ գովաբանում էր Օրուն և խորհուրդ տալիս լիովին վստահելու նրան<sup>20</sup>:

1699 թ. մարտին Օրին Կ. Պոլսով ֆրանսիացու անվամբ ժամանում է Էրզրում, այնուհետև՝ ապրիլի 4-ին՝ Ս. Էջմիածին, որտեղ նա սառն ընդունելության է արժանանում, իսկ Ամենայն հայոց կաթողիկոս **Նահապետ Ա Եղեսացին** (1691-1705) ընդհանրապես չի ընդունում նրան: Այս կապակցությամբ Կ. Եզյանն իր ժողովածուի ընդարձակ ներածականում նշում է, որ Մայր Աթոռում տիրող անորոշության պայմաններում Օրին չի բացահայտում իր այցի նպատակը և մեկնում է Ղարաբաղ (Գանձասար)՝ հանդիպելու տեղի կաթողիկոսին: Ի. Օրուն լսելու համար Աղվանից կաթողիկոսի նախաձեռնությամբ հրավիրվում է 5 արքեպիսկոպոսների մասնակցությամբ գաղտնի ժողով, որի ընթացքում Օրին զեկուցում է իր գալու նպատակների մասին: Սակայն կաթողիկ եկեղեցու հետ դավանաբանական և այլ բնույթի արգելանքների պատճառով նրա մտադրությունները (գաղափարները) հավանության չեն արժանանում Աղվանից (Գանձասարի) նորընտիր կաթողիկոս Սիմեոնի կողմից<sup>21</sup>:

## 2. Անգեղակոթի ժողովը և «ձերմակ թղթերի» հարցը

Այնուհետև Օրին անցնում է Սիսիանի գավառի Անգեղակոթ գյուղաքաղաք՝ տեղի մելիք Սաֆրազի կալվածք, որտեղ նրա աջակցությամբ **1699 թ. ապրիլի 29**-ին Սյունիքի և Ղարաբաղի զանազան կողմերից հավաքված 10 մելիքների մասնակցությամբ, Նահապետ

20 Տե՛ս ԳՅՅԵ Դ. Ա., նշվ. աշխ., էջ XXI:

21 Տե՛ս նույն տեղում:



Ա կաթողիկոսից գաղտնի գումարվում է խորհրդաժողով: Դժվար է հավատալ պրոֆ. Պ. Հովհաննիսյանի հաղորդած տեղեկությանը, թե շուրջ 20 օր բուռն քննարկումներ են ծավալվել<sup>22</sup>: Մեր կարծիքով՝ պարսկական իշխանություններից գաղտնի ժողով հնարավոր էր մի քանի օր միայն: Ժողովում ընթերցվում ու քննարկվում է Պֆալցի կուրֆյուրստի նամակ-ուղերձը, ինչպես և Օրու լրացուցիչ պարզաբանումները, մելիքների տեղեկությունները տվյալ պահի իրավիճակի մասին, որից հետո դրական տրամադրվածությամբ որոշվում է պատասխանել Հովհան Վիլհելմին: Քննարկումների ընթացքում ծագած վեճերի պատճառներից մեկն այն էր, որ Եվրոպայի օգնության ապահովման համար իբրև նախապայման դրվելու էր **կաթոլիկության ընդունումը**: Սակայն հայրենիքի ազատության գաղափարով տարված մելիքները, առանձնապես կարևորություն չտալով կաթոլիկ Հռոմի հպատակը դառնալու հարցին, միաձայն ընդունում են այդ առաջարկը<sup>23</sup>:

Կ. Եզյանի կազմած վավերագրերի ժողովածուում զետեղված է մելիքների՝ կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին ուղղած ապրիլի 29-ով թվագրված նամակի պատասխանը՝ հայերեն բնօրինակով, կա նաև դրա ֆրանսերեն թարգմանությունը, ինչը վկայում է փաստաթղթի օրինական լինելու մասին<sup>24</sup>: Նամակում նշված է բարձրատոհմիկ իշխան Իսրայել Օրու՝ հայոց Պռոշյան տոհմի ժառանգը (շառավիղը) լինելու<sup>25</sup>, նրա՝ 19 տարի հայրենիքից բացակայելու, այդ ընթացքում հայկական հողերն անհավատների լծից ազատագրելու համար ջանքեր թափելու, նրան լիովին վստահելու և այլ հարցերի մասին: Նամակում մելիքները գրում են, որ ունեն ապրուստի բավականաչափ միջոցներ, դրամ, գույք և զենք կրելու ունակ մարդիկ, իսկ

22 Տես **Հովհաննիսյան Պ.**, Հայ ազատագրական շարժումները (15-րդ դարի կես-18-րդ դարի վերջ), Եր., 2010, էջ 27:

23 Տես **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 334:

24 Տես **Эзоб Г. А.**, նշվ. աշխ., վավ. N 5, էջ 9-16, **Հովհաննիսյան Աշ.**, Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը, Եր., 2016, էջ 239:

25 Շատ պատմագիր հեղինակներ ու վերլուծաբաններ կարծում են, որ մելիք Իսրայելի տոհմը սերել է խաչենի **Պռոշյան** կամ **խաղբակյան** իշխանական տոհմից: Այս կապակցությամբ Լեոն գրում է, որ Օրու՝ վաճառական լինելը չի խանգարում, որ նրա նախահայրը հռչակավոր Պռոշյան իշխանական տոհմից սերեր, ինչի շուրջ, սակայն, շատերը կասկած են հայտնում: Նշենք, որ խաչենցի Պռոշի հայրը Վասակն էր: Վերջինիս որդու ծննդյան ավագանի անունը Հասան էր, որին, սակայն, Պռոշ են անվանել: Հայ մատենագիրների վկայությամբ՝ Պռոշ իշխանը Հուլավու խանի հայտնի զորավարներից էր, ով հատկապես աչքի էր ընկել ու մեծ անուն ձեռք բերել 1258 թ. Բաղդադի գրավման ժամանակ (տես **Գանձակեցի Կ.**, Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 150, 194, 274-275, **Ալիշան Ղ.**, Հայաստանում, Վենետիկ, 1901, էջ 529):

ստրկությունից ազատագրվելու համար կուրֆյուրստի օգնության դիմաց, Աստծո կամոք, խոստանում են նրան ապագա **հայկական թագավորության թագը**: Հովհան Վիլհելմին հասցեագրված նամակ-խնդրագրում «մելիքները երդվում և հավատացնում էին, թե իրենք և իրենց ժողովուրդը ոչինչ չեն խնայի՝ ո՛չ կյանք, ո՛չ գույք և, առհասարակ, պատրաստ են գնալու ամեն տեսակ զոհողության՝ հանուն իրենց երկրի ազատության»<sup>26</sup>: Վերջում մելիքները լիազորում են իշխան Իսրայել Օրուն իրենց անունից հանդես գալու և վարելու բոլոր գործերը, ինչը հաստատում են փաստաթղթի վերջում դրված իրենց 10 ստորագրություններով, այդ թվում՝ Օրու մանկության ընկեր մելիք Սաֆրազի, ամրագրում (զմռում) համապատասխան կնիքներով<sup>27</sup>, ինչպես նաև նշում ժողովի վայրը և ամսաթիվը՝ «Անգեղակոթ, 1699, 29 ապրիլի»<sup>28</sup>:

Այս փաստաթղթի առնչությամբ հայ պատմագրության մեջ շրջանառվել է Ի. Օրուն մելիքների կողմից լրացուցիչ տրված չգրված, մաքուր, սակայն ստորագրված ու կնքված, այսպես կոչված, «սպիտակ կամ ձերմակ թղթերի» հարցը: Մեր ժամանակներում լույս տեսած «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակում այդ փաստաթղթի առնչությամբ կարդում ենք. «Բացի դրանից Իսրայել Օրուն, ժամանակի ավանդույթին համապատասխան, տրամադրվում են նաև ստորև ստորագրված ու կնիքված «**սպիտակ թղթեր**», «**carte blanche**»՝ ըստ անհրաժեշտության դրանք լրացնելու»<sup>29</sup>: Մինչ օրս հստակ չէ, սակայն, թե մելիքները Օրուն **քանի** «սպիտակ» թուղթ են տվել: Այդ նույն «ձերմակ թղթերի» գոյության մասին է նշում խնդրին քաջատեղյակ և այն առաջիններից մեկը հետազոտած Աշ. Հովհաննիսյանը<sup>30</sup>:

Անգեղակոթի ժողովում Օրուն տրված «ձերմակ թղթերի» առնչությամբ Լեոն նույնպես տարակուսանք է հայտնել: Նրա «Երկերի ժողովածուի» 3-րդ հատորում նշված է, որ Անգեղակոթի ժողովը Օրուն հանձնել է մելիքների ստորագրությամբ ընդամենը **մեկ** «ձերմակ

26 Լեո, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 336:

27 Ըստ պրոֆ. Ա. Աբրահամյանի հավանական է, որ ժողովին մասնակից այդ տասը մելիքները լինեն դարաբաղցիներ, վայոցձորցիներ ու դափանցիներ (տես **Աբրահամյան Ա. Գ.**, նշվ. աշխ., էջ 52):

28 Տես Эзов Г. А., նշվ. աշխ., էջ XXII, վավ. N 3, էջ 8-9, **Հովհաննիսյան Աշ.**, Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը, էջ 239:

29 «Հայոց պատմություն», հատ. 3, գ. 1, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, էջ 19:

30 Տես **Հովհաննիսյան Աշ.**, Դրվագներ..., գիրք 2, էջ 323-324:

թուղթ»՝ «carte blanche», որպեսզի Հայաստանի ապագա թագավորը (ըստ ամենայնի՝ Հովհան Վիլիելմը – Ա. Հ.) այն օգտագործեր, ինչպես ինքը հարկ կհամարեր<sup>31</sup>: Մեկ այլ՝ «Խոջայական կապիտալ» աշխատության մեջ Լեոն նշում է Օրուն լրացուցիչ տրված՝ Անգեղակոթի ժողովի անդամների կնիքներով ու ստորագրություններով ամրագրված **երկու մաքուր, չգրված «ձերմակ թղթերի»՝ «carte blanche»-ների մասին**: Ընդ որում, Լեոյի մեկնաբանմամբ, իր հետ տարած այդ թղթերից **մեկը Օրին հանձնելու էր Հովհան Վիլիելմին՝** իր նոր՝ Մեծ Հայաստանի թագավորության պետքերին ծառայեցնելու համար, իսկ **մյուսը պահելու էր իր մոտ** «որպես ապացույց, վոր նա ճանաչված է իբրև գլուխ և հրամանատար Մեծ Հայաստանի գլխավորների և ատենակալների»<sup>32</sup>: **Սրանից հետևում է, որ Օրին չի ունեցել Անգեղակոթի ժողովականների կնիքներով ու ստորագրություններով ամրագրված լրացուցիչ «ձերմակ թղթեր», որ լրացներ ու ներկայացներ, օրինակ, ռուսաց ցարին, էլ չենք ասում, որ մեկիքները նրան չէին լիազորել Հայաստանի ազատագրության հարցով բանակցելու ռուսաց ցարի հետ**: Մնում էր, որ հանգամանքների թելադրանքով նման «նախաձեռնությունը» նա ինքը վերցներ իր ձեռքը և մի «ձերմակ թուղթ» լրացնել տար իր գրագիր Մինաս վարդապետին ու ներկայացներ Պետրոս 1-ին ցարին:

Այսպիսով՝ Լեոյի խոսքերից հետևում է, որ Անգեղակոթում Օրուն չեն տվել այնքան «ձերմակ թղթեր», որ նա հարկ եղած դեպքում, ինչպես հաճախ նշվում է եղած գրականության մեջ, լրացներ իր հայեցողությամբ և ներկայացներ, օրինակ, ռուսաց ցարին: Իսկ այն, ինչ վկայաբերվում է Կ. Եզյանի կազմած ժողովածուում, արել են Օրին և Արցախի Սբ Հակոբի վանքի վանահայր Մինաս վարդապետ Տիգրանյանը: Անգեղակոթի ժողովի անունից Պետրոս ցարին ներկայացված գրությունը Օրին ու Մինաս վարդապետը **կեղծել են՝** հանուն գործի հաջողության: Այս կապակցությամբ դարձյալ Լեոն գրում է. «...գիտեր կեղծել (խոսքը Օրու մասին է – Ա. Հ.) ոչ միայն կնիքներ, այլև ամբողջ գրություններ: Ահա այդ «տաղանդի» տուր-

31 Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 42:

32 Լեո, Խոջայական կապիտալ, էջ 197:

քերով ե, վոր մենք ունենք, ըստ յերևոյթին, իհարկե, մի ամբողջ դիպլոմատիկական դիվան Անգեղակոթ գյուղում»<sup>33</sup>:

«Մուրճ» ամսագրի խմբագիր Ա. Արասխանյանցի հաղորդմամբ՝ Անգեղակոթում վճռվում է Օրուն հանձնել 3 աղերսի թուղթ. մեկը՝ ուղղված Հռոմի պապին, մյուսը՝ Պֆալցի իշխանին, իսկ երրորդը՝ «Ռուսիոյ ցար Պետրոս Ալեքսեևիչին»<sup>34</sup>: Պրոֆ. Ա. Աբրահամյանը նույնպէս նշում է, որ մելիքները Օրուն են հանձնել ստորագրված և իրենց կնիքներով հաստատված «սպիտակ թղթեր»՝ դրանք ըստ նպատակահարմարության օգտագործելու համար, սակայն չի նշում դրանց թիվը: Այդ թղթերից հետագայում պատրաստվել են 4 կարևոր դիմումներ՝ ուղղված Ավստրիայի Լեոպոլդ 1-ին կայսրին, Պֆալցի կուրֆյուրստին, Հռոմի Ինոկենտիոս XII պապին և Պետրոս 1-ին ցարին՝ զինական օգնության խնդրանքով<sup>35</sup>: Ի տարբերություն պրոֆ. Ա. Աբրահամյանի՝ պրոֆ. Պ. Հովհաննիսյանը կարծում է, որ դիմումները հենց Անգեղակոթի ժողովից են հղվել, ինչն այնքան էլ համոզիչ չէ: Բացի այդ՝ Լեոյի նման Պ. Հովհաննիսյանը նշում է, որ ժողովում մելիքները Օրուն են հանձնել ստորագրված ու կնքված, սակայն չգրված **մեկ** թուղթ՝ լիազորելով նրան իրենց անունից ըստ անհրաժեշտության օգտագործելու այն<sup>36</sup>: Օրին, վերցնելով այդ թղթերը և ընկերակցելով իր անձնական քարտուղար ու նաև հայ հոգևորական շրջանակների պաշտոնական ներկայացուցիչ՝ Ղարաբաղի Սբ Հակոբի վանքի վանահայր (խոստովանահայր) **Մինաս վարդապետ Տիգրանյանին** (1658–1740), 1699 թ. գարնանը մեծ լիազորություններով ուղևորվել է դեպի Եվրոպա: Կարելի է ենթադրել, որ այդ չգրված, սակայն ստորագրված ու կնքված «սպիտակ» կամ «ձերմակ» ձևաթղթերը լրացվել են հետագայում, ըստ ամենայնի՝ Ի. Օրու և Մինաս վարդապետի կողմից, հիմնականում Վիեննայում:

Վերն ասվածից կարելի է հետևեցնել, որ Անգեղակոթի ժողովում, ի պատասխան Հովհան Վիլիելմի պաշտոնական գրության, պատրաստվել է ընդամենը **մի գրավոր պատասխան նամակ-գրություն**: Միաժամանակ, նկատի առնելով Հայաստանի տարածքային հեռավորությունը Եվրոպայից, որպեսզի հարկ եղած դեպ-

33 Նույն տեղում, էջ 198:

34 Տես «Մուրճ», Թիֆլիս, 1898, N 9 (սեպտեմբեր), էջ 1267:

35 Տես **Աբրահամյան Ա. Գ.**, նշվ. աշխ., էջ 52-53:

36 Տես **Հովհաննիսյան Պ.**, նշվ. աշխ., էջ 28:

քում Հայաստան գալու և հետ գնալու խնդիր չծագեր, հասկանալիորեն Օրուն են տրվել նաև, այսպես կոչված, «ձերմակ թղթեր», որպեսզի անհրաժեշտության դեպքում օգտագործեր դրանք իբրև պաշտոնական դիմում-գրություններ: Բայց մնում է վիճահարույց, թե իրականում Օրուն և Մինաս վարդապետին քանի «ձերմակ թուղթ» է տրվել: Դժվար է դրան հստակ պատասխան տալ: Բանն այն է, որ, ինչպես քիչ անց կտեսնենք, Օրին և Մինաս վարդապետը ստեղծված իրավիճակի ու հանգամանքների թելադրանքով, օգտվելով «քարթ բլանշի» իրավունքից, երբեմն իրենք են կեղծել «սպիտակ թղթերը»՝ դրանք ամրագրելով հետին թվով և մեկիքների ստորագրություններով: Հանդիպում են նույնիսկ մեկ մարդու ձեռագրով ստորագրություններ, նաև սարքովի կեղծ կնիքների դրոշմներ:

Միջանկյալ հավելենք, որ, ըստ ամենայնի, քաղաքական դրդապատճառով՝ պաշտոնանկության երկյուղով, Օրու հրավիրած Անգեղակոթի գաղտնի խորհրդածոդովին որպես պատվիրակ կամ ներկայացուցիչ չեն մասնակցել ո՛չ Տաթևի վանքից և ո՛չ էլ Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունից: Իսկ Նահապետ Ա Եղեասցի կաթողիկոսի և Ի. Օրու սառը հարաբերությունների հարցում Լեոն առաջ է քաշում մի վարկած, ըստ որի՝ Օրին 6 «իշխանների» հետ իբրև թե մտադիր է եղել դիմել Գանձասարի կաթողիկոսին՝ հասնելու նրան, որ Էջմիածնի կաթողիկոսությունը փոխարինվի Աղվանիցով: Նման հարկադրական քայլի դիմելու պատճառ է համարվել այն, որ Էջմիածինը դեմ է եղել դավանափոխությանը, մինչդեռ Հայաստանի ազատագրման գլխավոր նախապայմանը կաթողիկոսության ընդունումն էր<sup>37</sup>: Ստացվում է, որ հանուն Հայաստանի ազատագրության ոչ միայն դավանափոխության մտադրություն է եղել, այլև դրան հասնելու ճանապարհին կատարվելու էր անգամ կաթողիկոսական բարձրագույն աթոռի (Մայր Աթոռի) մրցակցային (գավազանակովային) փոփոխություն: Հարկ է նշել, որ Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսն իր հոգևոր (արքեպիսկոպոսական) կարգավիճակով երկրորդն էր Ամենայն հայոց կաթողիկոսից հետո<sup>38</sup>:

Հայ ազատագրական մտքի պատմությանը և Ի. Օրու կյանքին ու գործունեությանը քաջագիտակ հետազոտող Աշ. Հովհաննիսյանը

37 Տե՛ս Լեո, Խոջայական կապիտալ, էջ 196:

38 Տե՛ս Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը 17-19-րդ դդ., Եր., 2006, էջ 12:

հնարավոր է համարում, որ մելիքները նամակներ պատրաստած լինեին նաև Ավստրիայի կայսր Լեոպոլդ 1-ինի և Տոսկանայի մեծ դուքս Կոզմաս 3-րդ Մեդիչիի անուններով<sup>39</sup>: Ստացվում է նաև, որ Անգեղակոթի ժողովը հայ ժողովրդի անունից, փաստորեն առանց հայ հոգևոր դասի մասնակցության, պատրաստել էր մի աղերսագիր՝ ուղղված Հռոմի պապին՝ հայրենիքի ազատագրման դիմաց պատրաստ լինելով «մտնելու Սբ. Պետրոսի հոտի մեջ»<sup>40</sup>:

Կ. Եզյանի ժողովածուում կա մելիքների անունից Օրուն տրված նույն՝ 1699 թ. ապրիլի 29-ի անսաթով մեկ այլ գրություն՝ ուղղված մոսկովյան ցար Պյոտր Ալեքսեևիչին (Պետրոս 1-ին), գրեթե նույն բովանդակությամբ, ինչպիսին ուղղվել էր Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին<sup>41</sup>: Լեոն ևս նշում է, որ Անգեղակոթի ժողովում աղերսագիր է պատրաստվել նաև Պետրոս ցարի անունով, որով Օրին լիազորություն ստացավ բանակցություններ սկսելու նաև ռուսաց արքունիքի հետ<sup>42</sup>: Սակայն Կ. Եզյանի բերած 6-րդ վկայագրից պարզվում է, որ ռուսաց Պյոտր 1-ին ցարին ուղղված գրությունը տրվել էր այն հաշվով, որ Հայաստանի ազատագրության նպատակով արշավանք իրականացնելիս պֆալցյան-եվրոպական զորքերը կարողանային Հայաստան հասնել ոչ այլ կերպ, քան Ռուսաստանով: Ավստրիայի Հաբսբուրգյան կայսր Լեոպոլդ 1-ինի հետ հանդիպման ժամանակ, երբ Օրին ցանկություն էր հայտնել, որ նա նպաստի Հայաստանի՝ պարսկական լծից ազատագրմանը, կայսրը հասկացնել էր տվել, որ առանց մոսկովյան ցարի հետ գործակցության հնարավոր չէ արշավանքը հաջողությամբ ավարտին հասցնել<sup>43</sup>: Դրա համար էլ դիմել էին ցարին՝ թույլտվություն ստանալու նրա երկրով նախատեսվելիք արշավանքն իրականացնելու համար<sup>44</sup>: Կ. Եզյանի կազմած ժողովածուում կան այդ գրությունների լատիներեն թարգմանությունները, նաև դասական հայերեն բնագրերը<sup>45</sup>:

Այս առնչությամբ կարծում ենք, որ ձիշտ է նկատել ակադեմիկոս Աջ. Հովհաննիսյանը, որ հանգամանքների թելադրանքով 1701 թ. կե-

39 Տե՛ս Հովհաննիսյան Աջ., Իսրայել Օրին և հայ ազատագրական զարգացումը, էջ 241:

40 Լեոն, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 335:

41 Տե՛ս Զօռ Դ. Ա., նշվ. աշխ., վավ. N 6, էջ 17-20:

42 Տե՛ս Լեոն, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 340:

43 Տե՛ս Զօռ Դ. Ա., նշվ. աշխ., էջ XXIV:

44 Տե՛ս նույն տեղում, էջ XXIII: Տե՛ս նաև Հովհաննիսյան Աջ., Իսրայել Օրին և հայ ազատագրական զարգացումը, էջ 241:

45 Տե՛ս Զօռ Դ. Ա., նշվ. աշխ., վավ. N 7 և 8:

սերին **Օրին է կազմել սովել** սովյալ գրությունը հայ մելիքների անուհից հետին թվով՝ նույն **ապրիլի 29-ի** ամսաթվով, «**ձերմակ թղթի**» իրավունքով՝ Պետրոս ցարին ներկայանալու համար: Քանզի «Մուկովի թագավոր ինքնակալ ուռուսին» էին դիմում ոչ միայն նրա տարածքով եվրոպական գորք փոխադրելու խնդրանքով, այլև աղաչանք-պաղատանքով, որ հենց նրա գորքերի օգնությամբ Հայաստանն ազատագրվի անհավատների լծից: Դիմում էին աշխարհի երեք կողմերի ինքնակալ թագավորին, որ լսի իրենց աղաչանքը և գթալով ազատություն բերի «այս տառապեալ գերի գրիստոնէիցս»<sup>46</sup>:

Օրու ջանքերով կազմված այդ նույն գրությունում դարձյալ կարդում ենք. «Կու խնդրենք և կաղերսենք առ քո աստուածասիրութեանդ որ կարող ես ա՛յ (նշանակում է՝ աստծոյ) ողորմութ՛քն (նշանակում է՝ ողորմութեամբն) ազատել զմեր խեղճ ազգն ի պէս պէս պատահմանիցն անօրինաց»<sup>47</sup>: Նամակի վերջում գրված են նույն 10 մելիքների, այդ թվում՝ Մելքոնի որդի Սաֆրագի անունները, «Թին ՌձԽԸ, ի գիւղաքաղաք Ընկեղակոյթ. Ի Ապրիլի ի՞թ (հայկական ամսաթվով՝ 29»<sup>48</sup>: Սա իբրև թե մելիքների կողմից Օրուն տրված նամակի ռուսերեն տարբերակն է, որը հայերենից թարգմանվել և ներկայացվել է ցարին<sup>49</sup>:

Այստեղ ծագում է մեկ այլ կնճռոտ հարց: **Բանն այն է, որ Անգեղակոթի 1699 թ. ապրիլի 29-ի Հովհան Վիլիելմին և մյուսներին ուղղվելիք նամակ-գրություններից դժվար չէ նկատել, որ հայ մելիքները ամենևին էլ մտադիր չեն եղել դիմել հունադավան-ուղղափառ ռուսին՝ իրենց ազատագրելու խնդրանքով:** Այսպես՝ Օրու նկարագրությամբ մի վավերագրում պատմվում է, որ «ռուսներն առիթ են ունեցել հասկացնելու հայերին Հայաստանը գրաւելու նկատմամբ իրանց ունեցած դիտաւորութիւնը, և սակայն հայ մելիքները այդ լսել անգամ չեն կամեցել՝ երկիւղ կրելով, թէ այդ նւաճումի հետևանքով հարկադրւած կարող են լինել փոխել իրանց դաւանանքը, ընդունել «յունական հերձածը»»: Տակավին երիտասարդ պատմաբան Աշ. Հովհաննիսյանը 1913 թ. Մյունխենում հաջողությամբ պաշտպանած ավարտաճառում, հղում անելով Կ. Եզյանի կազմած փաստաթղթերի

46 Նույն տեղում, վավ. N 6, էջ 17:

47 Նույն տեղում, էջ 18:

48 Նույն տեղում, էջ 20:

49 Տե՛ս նույն տեղում, վավ. N 8, էջ 24-27:

ժողովածուին, նշում է, որ հայերը ձեռնպահ են մնացել Ռուսաստանի օգնությունից հենց «յունական հերձուածի» պատճառով<sup>50</sup>:

Շարունակելով նույն միտքը, հայ մելիքների մտայնությունները նկատի առնելով՝ Օրին հավաստիացրել է, որ «Հայերը կգերադասէին լինել **անհաւատների ստրուկները, քան ապրել հունադաւանների տիրապետութեան ներքոյ** (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»<sup>51</sup>: Նշանակում է՝ հայ մելիքները նախընտրել են մնալ անհավատների ստրուկը, քան դիմել, խնդրել «յունական հերձուածին»՝ ազատագրելու Հայաստանն ու հայերին: **Այլ խոսքով, զուտ դավանական ենթատեքստով, հայ մելիքները բնավ ցանկություն չեն ունեցել, որ ռուսական զորքերը ևս մասնակցություն ունենան կազմակերպելիք զորարշավին:** Նշանակում է՝ այն ժամանակների հայ հոգևոր և աշխարհիկ հանրույթը **կաթուղիկ եկեղեցին** գերադասել է **հունադավան** ռուսական-ուղղափառ հերձուածից՝ թերևս հիշելով Անիի անկման գործում Բյուզանդիայի խարդավանքները: **Մյուս կողմից, սակայն, Անգեղակոթի ժողովով այդ նույն մելիքները, «ձերմակ թղթեր» տալով, լիազորել էին Օրուն հարկ եղած դեպքում հայրենիքի ազատագրության խնդրով դիմելու ում որ հարկն է՝ կառնորություն չտալով կրոնական-դավանական գործոնին:**

### 3. Ի. Օրու «Պֆալցյան ծրագիրը»

Տեղեկություններ կան, որ Ի. Օրին, հայրենիք գալով 10-20 օրով, գործին չվնասելու համար գաղտնի է պահել իր վերադարձը քրոջից ու եղբորից (անունը Վարդան էր): Գաղտնիքը չբացահայտելու համար իբրև անծանոթ հյուր՝ նա ընդամենը մի գիշեր է անցկացրել հայրենի տանը՝ իր ծննդավայր Վայոց ձորի **Մարտիրոս** գյուղում, այնուհետև շտապել է դեպի Եվրոպա՝ Կ. Պոլիս, Իտալիա և Բավարիա՝ կուրֆյուրստի մոտ: 1699 թ. երկրորդ կեսին նա Մինաս վարդապետ Տիգրանյանի հետ Կ. Պոլսով և Իտալիայով հասել է Գերմանիա՝ Դյուսելդորֆ՝ ներկայանալու կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին, սակայն հայտնի է, որ վերջինիս վատառողջության (հիվանդության)

50 Տե՛ս **Հովհաննիսյան Աջ.**, Հայ-ռուս օրինտացիայի ծագման խնդիրը, էջ 54: Տե՛ս նաև **Հովհաննիսյան Աջ.**, Իրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը, էջ 323:  
51 Նույն տեղում:



պատճառով Օրին ընդունելության չի արժանացել և միայն ամիսներ անց՝ 6-ամսյա ընդմիջումից հետո է մելիքների անունից կուրֆյուրստին հանձնել **սեպտեմբերի 22-ի** ամսաթվով լրացված նամակ-գրությունն ու ներկայացրել Հայաստանի ազատագրության 36-կետանոց մի ընդարձակ ծրագիր, որը հայտնի է «**Պֆալցյան ծրագիր**» անվանումով: Դրանում խոսվում էր ապագա արշավանքի հնարավոր միջոցների, ուժերի և ուղիների, պարսկական լծից Հայաստանի ազատագրման և Հովհան Վիլիելմի գլխավորությամբ հայ կաթոլիկ թագավորություն հիմնելու մասին: Օրու ծրագրային այն կետը (անկախ իրատեսական լինելու աստիճանից), որ «Մեծ Հայաստանը» անհավատ-անօրենների լծից ազատագրելով՝ Պֆալցի կուրֆյուրստ **Հովհան Վիլիելմը** կդառնա Հայաստանի թագավոր, ինքնին նշանակում էր, որ խոսքը վերաբերում էր ոչ միայն Հայաստանի ազատագրությանը, այլև իբրև դրա տրամաբանական շարունակություն՝ **անկախությանը**: Ընդ որում, ապագա արշավանքը պիտի կրեր խաչակրաց արշավանքի բնույթ՝ Քրիստոսի խաչելության և սբ Գրիգոր Լուսավորչի պատկերներով<sup>52</sup>: Ըստ Կ. Եգյանի կազմած ժողովածուի վավերագրերի՝ 36 կետից բաղկացած, ընդամենը 16 լայնադիր էջ զբաղեցնող ծրագրի ֆրանսերեն տեքստը Օրին անձամբ չի գրել, այլ թելադրել կամ գրել է տվել ուրիշին<sup>53</sup>: Ինչպես Աշ. Հովհաննիսյանը, նույնպես և Լեոն ու մյուս հետազոտողները փաստում են, որ Օրին ինքը չէր գրում, այլ թելադրում էր կամ գրել էր տալիս ուրիշին<sup>54</sup>:

Ըստ կազմված ծրագրի՝ Արևելյան Հայաստանն ազատագրելու նպատակով եվրոպական երեք երկրների (Պֆալցի, Ավստրիայի և Տոսկանայի) մասնակցությամբ 1700 թ. գարնանը՝ մայիսի վերջերին, պիտի սկսվեր դեպի Անդրկովկաս ծրագրված զորարշավը՝ ըստ էության հասնելով **Հռենոսի ափերից մինչև Թավրիզ**: Այդ հեծյալ և հետևակ զորամասերը պետք է անցնեին Բոհեմիայի, Լեհաստանի և Ռուսաստանի տարածքներով, Վոլգա գետով փոխադրվեին Աստրախան, որտեղից էլ նավերով Կասպից ծովով, Շիրվանի ծովեզրով առաջ շարժվելով՝ պիտի գրավեին Շամախին և ճանապարհ հարթեին Արևելյան Հայաստան մուտք գործելու համար: Օրու ծրագրով՝

52 Տես Գոթ Դ. Ա., նշվ. աշխ., վավ. N 9, էջ 28-44:

53 Տես նույն տեղում, էջ 2-44:

54 Տես Լեոն, Խոջայական կապիտալ, էջ 200:

Արևելյան Հայաստանի ազատագրման համար կպահանջվեր 20-25 օր:

Տեղին է ակադեմիկոս Գ. Գալոյանի դիտարկումն այն մասին, որ հայ ազատագրական շարժման գործիչների միտքը չի սահմանափակվել միայն Արևելյան Հայաստանի ազատագրմամբ, այլ նկատի է առնվել ամբողջ Հայաստանը: Եվ պատահական չէ, որ հետագայում Ի. Օրին Պետրոս Մեծին է ներկայացրել ամբողջ Հայաստանի քարտեզը<sup>55</sup>: Վաստակաշատ պատմաբան Լեոն ևս, հենվելով Օրու՝ ռուսաց ցարին ուղղված խնդրագրերից մեկի վրա, նշում է, որ նա Պետրոս Մեծին է ներկայացրել **Հայաստանի քարտեզը**<sup>56</sup>: Փաստենք, որ հայ պատմագրության մեջ Պետրոս 1-ին ցարին ներկայացված քարտեզը հայտնաբերել է հայ-ռուսական հարաբերությունների քաջագիտակ մասնագետ Վ. Ոսկանյանը Մոսկվայի հին ակտերի արխիվում (ИГАДА), մի փաստաթուղթ, որը պատմական, քաղաքական և գիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում<sup>57</sup>:

Վերադառնալով Օրու կազմած «Պֆալցյան ծրագրին»՝ նշենք, որ դրանում անկախ պետականության վերականգնման գործում նշանակալի տեղ էր հատկացվում տեղում **հայկական ապստամբական զինուժի** մասնակցությանը, ինչը դրվատանքի արժանի գաղափար էր: Սակայն ծրագրի կազմողը, հավանաբար եվրոպական զինարշավի կազմակերպիչներին շահագրգռելու և խրախուսելու նպատակով, նշել էր մի պատկառելի թիվ՝ 192 հազար<sup>58</sup>: Լեոյի ներկայացրած տվյալներով՝ եվրոպական երեք երկրների 5-6-հազարանոց զորքին պիտի ընդառաջ գնային հայերը՝ ռազմի դաշտ դուրս բերելով ավելի քան 200 հազար մարդ<sup>59</sup>: Իհարկե, սա չափազանցություն էր, Լեոյի իսկ գնա-

55 Տե՛ս **Պալոյան Գ. Ա.**, Պատմության քառուղիներում, Եր., 1982, էջ 80:

56 Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 431:

57 Տե՛ս **Ոսկանյան Վ.**, Իսրայել Օրու կողմից Պետրոս 1-ին ներկայացված նորահայտ քարտեզը, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1961, N 3-4, էջ 297-306: Ի դեպ, 1703 թ. նոյեմբերի 15-ին Պետրոս 1-ին ցարին ուղղված Օրու նամակը և դրան կցված Անդրկովկասի քարտեզը մի կողմից ցույց են տալիս Օրու նպատակը քարտեզում պատկերված Հայաստանի ազատագրումը, իսկ մյուս կողմից՝ Պետրոս ցարի տարածաշրջանի թարմ քարտեզ ունենալու ցանկությունը, որը պիտի ծառայեր օրեցօր հզորացող Ռուսաստանի ծրագրերին: Իհարկե, Օրու ծրագրով առաջնահերթը Արևելյան Հայաստանի ազատագրումն էր, քանզի հին և միջին դարերում հայկական պետությունները իրենց երբեմնի մայրաքաղաքներով՝ Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին, Անի և այլն, հիմնականում գտնվել են արևելահայ հատվածում: Բացի այդ՝ Արևելյան Հայաստանում էր հիմնվել ու գործում հայ հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սբ Էջմիածինը և այլն: Այս ամենով հանդերձ հայ ազատագրական շարժման գործիչների հեռագնա պլաններում է եղել վերջ դնել նաև Հայաստանի ու հայ ժողովրդի **դարերով մասնատված** վիճակին, իհարկե արտաքին զինական ուժի օգնությամբ:

58 Տե՛ս **Эзов Г. А.**, նշվ. աշխ., վավ. N 9, էջ 35-36:

59 Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 338:

հատականով՝ «Ֆանտաստիկական չափազանցություն»<sup>60</sup>, որովհետև եթե հաշվի առնենք, թե 17-րդ դարասկզբին միայն Շահ Աբաս 1-ինը արևելահայերի ինչպիսի գանգվածային տեղահանություն էր կազմակերպել, հնարավոր չէր արևելահայերից 200 հազարի հասնող, այն էլ՝ մարտունակ զինուժ ձևավորել:

Չնայած այս ամենին՝ կարելի է վստահաբար ասել, որ եթե անգամ Հովհան Վիլիելմը, Լեոպոլդ 1-ինը և Տոսկանայի մեծ դուքսը, զուտ քրիստոնեական-մարդասիրական նկատառումներից ելնելով, ցանկանային արշավանք կազմակերպել դեպի Հայաստան, ապա դա այն ժամանակների պայմաններում միանգամայն անիրականանալի կլիներ: Մյուս կողմից էլ, եթե նկատի ունենանք, որ դեռ նոր էր ավարտվել Թուրքիայի դեմ եվրոպացիների արյունալի պատերազմը, և նոր էր կնքվել 1699 թ. հունվարի 26-ի Կարլովիցի հաշտությունը, ապա ռազմաքաղաքական առումով բնավ որևէ շահագրգռություն չկար դեպի արևելք մի նոր ռազմարշավ կազմակերպելու հարցում: Բացի այդ՝ Ավստրիայի Հաբսբուրգյան Լեոպոլդ 1-ին կայսրը Կարլովիցի հաշտությունից հետո պատրաստվում էր Ֆրանսիայի Բուրբոնյան Լյուդովիկոս 14-րդի դեմ Իսպանիայի գահաժառանգության համար (1702-1714) պատերազմին:

Ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանի գնահատմամբ՝ «Օրիի Պֆալցյան ծրագիրը վերին աստիճանի ուշագրավ վավերագիր է **հայ ազատագրական մտքի պատմության համար** (ընդգծումը հեղինակինն է – Ա. Հ.)»<sup>61</sup>: Դրանում «ակնբախ է **հայ ազգային-քաղաքական գիտակցության** (ընդգծումը հեղինակինն է – Ա. Հ.) սկզբնավորումը»<sup>62</sup>: Իր անիրատեսությամբ, չափազանցություններով, ուռճացված թվական տվյալներով հանդերձ՝ Պֆալցյան կամ Դյուսելդորֆյան կոչված ծրագիրը, **փաստորեն, առաջին գրավոր փաստաթուղթն է**, որում հայ աշխարհիկ գործչի կողմից ուրվագծվում էր Հայաստանի ազատագրման համար արտաքին (եվրոպական) ուժերով Հռենոսի ափերից մինչև Թավրիզ գորարշավ կազմակերպելու նպատակադրումը: Մյուս կողմից՝ դժվար է պատկերացնել, թե 17-18-րդ դարերի Հայ առաքելական եկեղեցու հավատավորը կարող կլինե՞ր արդյոք ընկալելու և ընդունելու հայ-կաթոլիկական միասնական հա-

60 Նույն տեղում, էջ 339:

61 Հովհաննիսյան Աշ., Դրվագներ..., գիրք 2, էջ 384:

62 Նույն տեղում, էջ 386:

վատք ունեցող թագավորություն, որի արքան պիտի լիներ կաթոլիկ հավատքի կրող Հովհան Վիլհելմը:

#### 4. Հարցի պատմագիտական գնահատականը

Հանրագումարի բերելով Ի. Օրու եվրոպական առաքելությունը՝ հարկ է արձանագրել, որ, չնայած հայ պատմագրության մեջ նրա գործունեությանը տրված ոչ միանշանակ գնահատականներին, նա եղել է հայ ազատագրական գաղափարի նվիրյալ, ինքնատիպ անհատականություն: Կարելի է ասել, որ **Ի. Օրին առաջին քայլն արեց Հայաստանի ազատագրության հարցը կրոնական երանգավորումներից ձերբազատելու և այն աշխարհիկ-քաղաքական պայքարի վերածելու ուղղությամբ:** Հաջորդ քայլը պիտի աներ նրա գործի արժանավոր շարունակող Հովսեփ Էմինը:

Պրոֆ. Ա. Աբրահամյանը Ի. Օրուն համարում էր «հայ առաջին դիվանագետը»<sup>63</sup>: Բայց ասվածը ամենևին էլ չի նշանակում, թե հայ ազատագրական պայքարը լիովին դուրս էր եկել հայ հոգևոր շրջանակներից և ձեռք բերել զուտ աշխարհիկ-քաղաքական բնույթ: Այս հարցի առնչությամբ տեղին է Լեոյի քննադատական դիտարկում-դիտողությունն այն մասին, որ հայ ժողովրդի պատմական դժբախտություններից է այն, որ պատմության ողջ ընթացքում՝ սկսած մեծահռչակ Ներսես Մեծից ու Սահակ Պարթևից, դիվանագետի դերակատարությունը գերազանցապես ստանձնել է հոգևորականությունը, ինչը փաստորեն շարունակվել է ընդհուպ մինչև 20-րդ դարի սկզբները<sup>64</sup>: Ի. Օրին, հետագայում Հ. Էմինը ընդամենը հայ ազատագրական պայքարի մեկ-երկու առանձին դրվագ են ներկայացնում: Հետագա շրջանում այդ շարժման մեջ ավել կամ պակաս չափով իրենց քաղաքական դերակատարությունն ունեցան հայ հոգևոր մյուս ձանաչված դեմքերը՝ Հովսեփ արք. Արղությանը, Ներսես Աշտարակեցին, Մկրտիչ Խրիմյանը, Ներսես Վարժապետյանը, Մատթեոս Իզմիրլյանը, Մաղաքիա Օրմանյանը, Գևորգ Ե Վշտալին և այլք: Այս կապակցությամբ ձանաչված գրականագետ Ս. Սարինյանը նկատել է տալիս, որ Հայաստանի երկու հատվածների բաժանվածությա-

63 Աբրահամյան Ա. Գ., նշվ. աշխ., էջ 3:

64 Տե՛ս Լեո, Անցյալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925, էջ 261:

յունը «իր կնիքն էր դնում ազգային հոգեբանության վրա», թեև հայ եկեղեցին նրանց պահում էր որպես «մի միացյալ ժողովուրդ և մի ընդհանուր Հայաստան»<sup>65</sup>:

Ի. Օրու պֆալցյան գործունեության շրջանը **«արկածախնդրական»** է բնութագրել 19-րդ դարավերջին (1894 թ.) Օրու կյանքին ու գործունեությանը վերաբերող վավերագրերը առաջինն ուսումնասիրած Մյունխենի համալսարանի պրոֆեսոր **Կարլ Ֆոն Հայգելը**<sup>66</sup>: Նույնպիսին է նաև մեծանուն հայագետ հայր Ղ. Ալիշանի՝ Ի. Օրուն տված գնահատականը՝ **«բաղդախնդիր»**<sup>67</sup>: Իսկ հայ պատմագրության երախտավոր Լեոն ակնարկում է, որ Մ. Չամչյանն անգամ չի հիշատակում Օրու անունը<sup>68</sup>: Դրան հակառակ՝ նա բարձր է գնահատում Օրու «Պֆալցյան ծրագիրը»՝ այն համարելով «Հայոց պատմության համար եզակի և անչափ կարևոր վավերագիր»<sup>69</sup>՝ «հայ **քաղաքական մտքի** խոշոր հուշարձան»<sup>70</sup>: Օրու ծրագիրը նույն կերպ բարձր է գնահատել ակադեմիկոս Աջ. Հովհաննիսյանը իբրև հայ ազատագրական առաջին ծրագիր, որում «ակնբախ է հայ ազգային-քաղաքական գիտակցության սկզբնավորումը»<sup>71</sup>:

Ճանաչված պատմաբան, աղբյուրագետ Պ. Հովհաննիսյանի գնահատմամբ՝ «Պֆալցյան ծրագիրը կազմված էր դիվանագիտական բարձր հմտությամբ ու խորաթափանցությամբ», և «հայ ազատագրական շարժման պատմության մեջ սա չուներ իր նախադեպը»<sup>72</sup>: Այլ խոսքով՝ **Օրու կազմած «Պֆալցյան ծրագիրը», չնայած իր բացերին ու անիրատեսական լինելուն, առաջին մշակված վավերագիր փաստաթուղթն էր, որ հայ ազգային-ազատագրական շարժմանն ու պայքարին տալիս էր ծրագրված, առարկայական բովանդակություն:**

Չնայած նման ոչ միանշանակ գնահատականներին՝ պետք է ասել, որ Օրու կյանքն ու գործունեությունը գնահատելի են նաև այն առումով, որ նա առաջիններից էր, որոնց ջանքերով հայ ազատագրական շարժումը ձեռք բերեց **աշխարհիկ-քաղաքական** բնույթ:

65 Սարինյան Ա., Հայ գաղափարաբանություն, Եր., 1998, էջ 19:

66 Տե՛ս Հովհաննիսյան Աջ., Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը, էջ 484:

67 Ալիշան Ղ., Սիսական, էջ 212:

68 Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 340:

69 Լեո, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 48:

70 Նույն տեղում, էջ 65:

71 Հովհաննիսյան Աջ., Դրվագներ..., գիրք 2, էջ 385:

72 Հովհաննիսյան Պ., նշվ. աշխ., էջ 29:

Հայ ազատագրական մտքի (գաղափարի) առումով գնահատելի է, որ փորձ արվեց արտաքին՝ եվրոպական արշավանքը զուգակցելու տեղացիների՝ հայերի և վրացիների ապստամբության ու զինված պայքարի հետ: Գնահատելի է, որ Օրու առաջ քաշած ազատագրական գաղափար-նպատակադրումները, կազմած ծրագիրը, չնայած այն ժամանակների պայմաններում իրագործվելու անիրատեսականությամբ, վերջին հաշվով կոչված էին բյուրեղացնելու Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման և պետականության վերականգնման տեսլականը:

Օրին իր «Պֆալցյան ծրագրով» հայ ազատագրական շարժումը և դիվանագիտական բանակցությունները դրեց ռազմաքաղաքական պայքարի հիմքերի վրա: Պատմության փորձի ու դասերի առումով ուսանելին այն է, որ հետագայում նման գաղափարներն ու ծրագրային նպատակադրումները կոչված էին ծառայելու Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման և պետականության վերականգնման գործին:

## 5. Օրու ռուսաստանյան առաքելությունը որպես եվրոպական կողմնորոշման գործնականացման փորձ

Ժամանակագրորեն 1700 թվականին ավարտվում է Ի. Օրու գործունեության, այսպես կոչված, **եվրոպական** փուլը, իսկ 1701 թվականից՝ սկսվում **ռուսաստանյանը**, որը տևել է ընդամենը տասը տարի:

Եվրոպական երեք երկրների տերերի՝ Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի, Ավստրիայի կայսր Լեոպոլդ 1-ինի և Տոսկանայի (Ֆլորենցիայի) մեծ դուքս Կոզմաս 3-րդի հետ եռակողմ զինակցության չկայացումը կամա թե ակամա հարկադրում է Ի. Օրուն հանուն հայրենիքի ազատագրության **մի կողմ թողնել դավանական գործոնը** և դիմել **եվրոպական մեկ այլ երկրի** օգնությանը: Այս անգամ նա իր առաքելությունն ուղղում է դեպի **Ռուսաստան**: Դա Ի. Օրուն և նրա քարտուղար Մինաս վարդապետին հասկացրել էին Հովհան Վիլհելմն ու Լեոպոլդ 1-ինը: Այսպես՝ վերջինս, չներժելով հայերին ազատագրելու Օրու խնդրանքը, նրան խորհուրդ էր տվել դիմելու Ռուսաստանի օգնությանը, քանզի «առանց ռուսաց թագավորի հա-

մաճայնության և աջակցության չէ կարելի գորք ուղարկել Կասպից ծովի ափերը»<sup>73</sup>:

Այս հարցի առնչությամբ համամիտ չենք պրոֆ. Ա. Աբրահամյանի այն գնահատականին, թե Հայաստանի ազատագրության հարցում Արևմտյան Եվրոպայի երկրները վարել են **երկդիմի** քաղաքականություն, իսկ Ռուսաստանը, տվյալ դեպքում՝ Պետրոս 1-ինը՝ **ոչ: Իրականությունն այն է, որ երկու դեպքում էլ կողմերն առաջնորդվել են իրենց ազգային-պետական շահերով, և Հայաստանին ու հայ ժողովրդին ցուցաբերվող օգնությունը մեծապես կախված էր նրանից, թե որքանով էին այդ շահերը, նույնիսկ անձնական փառասիրական նպատակները համահունչ հայ ժողովրդի ազատագրության և պետականության վերականգնման բաղձանքներին:**

Այնուամենայնիվ, դեպի Ռուսաստան Ի. Օրու առաքելության առնչությամբ ինքնաբերաբար առաջ է գալիս ռուսաց ցարին դիմելու և Հայաստանի ազատագրության խնդրով ռուսական բարձր իշխանությունների հետ բանակցելու պատճառների հարցը: Լեոն իր ձեռքի տակ եղած վավերագիր նյութերով փաստում է, որ ո՛չ 1699 թ. Անգեղակոթի ժողովի, ո՛չ էլ որևէ այլ գրություն-հանձնարարականով Օրին լիազորություն չի ունեցել դիմելու **հունադավան ռուսներին:** Ինչպես արդեն ասվել է, «ավելի գերադաս են համարել մնալ գերության մեջ, քան ազատվել հունադավանների ձեռքով»<sup>74</sup>: **Սա գալիս է հաստատելու մեր այն պնդումը, որ Ռուսաստան գնալու և ռուսական իշխանությունների հետ բանակցելու համար Ի. Օրին չի ունեցել Անգեղակոթի ժողովի կողմից իրեն գրավոր կամ բանավոր տրված ոչ մի լիազորություն:** 20-րդ դարի սկզբներին նույն միտքն է զարգացրել տակավին երիտասարդ հետազոտող Աշ. Հովհաննիսյանը՝ հայ մելիքները չեն ցանկացել, որ Ռուսաստանը (ցարը) ազատագրի հայերին, «Քանզի վտանգ կար, որ դրանով իրենց կպարտադրվեր նաև հունական հերձվածը: **Հայերը գերադասել են մնալ անհավատների ստրուկներ, քան լինել ուղղափառ ռուսների իշխանության տակ** (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»<sup>75</sup>: Մյունխենում պաշտպանած իր ատենախոսության մեկ այլ հատվածում, վավերագիր նյութերից

73 Լեո, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 423:  
74 Լեո, Խոջայական կապիտալ, էջ 215:  
75 Հովհաննիսյան Աշ., Իսրայել Օրին և ազատագրական գաղափարը, էջ 249:

մեջբերումներ անելով, Աշ. Հովհաննիսյանը դարձյալ պնդում է, որ հայերը խուսափել են Ռուսաստանի օգնությունից հենց **«հունական հերձվածի»** պատճառով<sup>76</sup>: **Սա նշանակում է, որ Օրին Հայաստանին օգնելու հարցով հայ մելիքների կողմից հանձնարարություն չի ունեցել դիմելու ռուսաց ցարին:** Ուստի այստեղ բանագնաց Օրուն, ըստ ամենայնի, օգնության է հասել մելիքների՝ իրեն տրված «ձերմակ թղթը»: Մելիքների կողմից Ռուսաստանին դիմելու համապատասխան լիազորություն չունենալով՝ նա հարկադրված գնացել է նման չթույլատրված քայլի ու մեկնել Ռուսաստան: Բայց, ինչպես արդեն ասվեց, այդ առաքելության համար նա պետք է ունենար Անգեղակոթում հավաքված Ղարաբաղ-Սյունիքի մելիքների անունից հանձնարարական-գրություն՝ իբրև իրավական հիմք: Նման փաստաթուղթ չունենալով՝ Օրին և Մինաս վարդապետը, ըստ ամենայնի, դիմել են ինքնագլուխ քայլի և հայերենով «ձերմակ թղթի» իրավունքով պատրաստել մելիքների անունից ցարին ուղղված նամակ-գրություն (խնդրագիր)՝ այն թվագրելով հետին թվով՝ **1699 թ. ապրիլի 29**, որպեսզի ժամանակագրորեն համապատասխաներ Անգեղակոթի ժողովի հրավիրման ժամանակին: Այս առումով դժվար է համաձայնել ակադեմիկոս Գ. Գալոյանի արտահայտած այն մտքին, թե Պետրոս Մեծին ուղղված ապրիլի 29-ի խնդրագիրը հայ մելիքներն են **պատրաստել և տվել** Ի. Օրուն՝ այն տեղ հասցնելու<sup>77</sup>: Մենք կարող ենք հիմնավորապես հավաստել, որ Ռուսաստան մեկնելիս նամակ-խնդրագիրը հայ մելիքների անունից ինքնական պատրաստել են Ի. Օրին և Մինաս վարդապետը «ձերմակ թղթի» իրավունքով: Բայց կրկին հիշեցնենք, որ հայ մելիքների կողմից «ձերմակ թղթից» օգտվելու իրավունք (լիազորություն) Օրուն տրվել էր **միայն Արևմտյան Եվրոպայի երկրներին դիմելու համար: Ահա թե խնդիրը որն է: Անգեղակոթի ժողովին մասնակից հայ մելիքների պլաններում չի եղել նրան լիազորություն տալ դիմելու Մոսկվայի ցարին:**

Հայ մելիքների անունից ռուսաց ցարին ուղղված նամակում անորոշ էր մնում, թե ում պիտի պատկաներ ազատագրվելիք Հայաստանի թագը, մինչդեռ կուրֆյուրստին ներկայացված ծրագրով՝ Հայաստանի ազատագրումից հետո Հովհան Վիլիելմը պիտի դառնար

76 Տե՛ս նույն տեղում, էջ 323:

77 Տե՛ս **Գալոյան Գ. Ա.**, նշվ. աշխ., էջ 80:



նրա թագավորը: Այս կապակցությամբ Լեոն, հաճախ իր ոչ ստանդարտ դատողություններին համապատասխան, կռահել է տալիս, որ հավանաբար Օրին ինքն է հավակնել լինելու հայոց թագավոր, մանավանդ որ քանիցս ակնարկել էր իր՝ Պռոշյան տոհմի ժառանգորդը լինելու մասին: Բայց միաժամանակ, Լեոյի մեկնաբանմամբ, Հայաստանի թագավորությունը պիտի գտնվեր Ռուսաստանի հովանու (թևարկության) ներքո<sup>78</sup>:

## 6. Ի. Օրու պատվիրակության ժամանումը Ռուսաստան, բանակցությունները և «Մոսկովյան ծրագիրը»

1700 թ. սեպտեմբերի 14-ի անաթովով Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմը Ի. Օրուն տալիս է գրություն-անցաթուղթ՝ որպես իր բանագնաց ռուսաց ցար Պյոտր Ալեքսեևիչին ներկայանալու համար<sup>79</sup>: Ռուսական պետական պրիկազների դեպարտամենտում (դեպանական ատյանում) պահվում է 1701 թ. հուլիսին Օրու՝ Ռուսաստան ժամանման մասին անցագրի ռուսերեն քաղվածքը<sup>80</sup>:

1701 թ. ապրիլին Օրին և Մինաս վարդապետը ժամանում են Լեհաստան (Վարշավա), որտեղ ստանում են թույլտվություն Մոսկվա ուղևորվելու համար: Հունիսի վերջին կամ հուլիսի սկզբին Օրին՝ իբրև բավարական կուրֆյուրստի բանագնաց, Մինաս վարդապետի, մի երիտասարդ լեհահայ թարգմանչի՝ Նազար Օրեխովիչի և ևս մի քանի ուղեկիցների հետ Սմոլենսկով անցնում է Ռուսաստան: 1701 թ. հուլիսի 7-ին հայ պատվիրակները՝ ընդամենը 5 հոգի, հասնում են Մոսկվա և ներկայանում Պետական պրիկազների դեպարտամենտ 3 անցագիր-գրություններով՝ 1700 թ. սեպտեմբերի 14-ի Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի, 1700 թ. դեկտեմբերի 8-ի Ավստրիայի կայսր Լեոպոլդ 1-ինի և 1701 թ. ապրիլի 23-ի Լեհաստանի թագավոր Ավգուստ 2-րդի<sup>81</sup>: Օրու գլխավորած պատվիրակությունը տեղավորվում է Մոսկվայի քաղաքային ռատուշայի (ինքնավարության) ամառանոցում<sup>82</sup>:

78 Տես Լեոն, Խոջայական կապիտալ, էջ 216:

79 Տես Эзов Г. А., նշվ. աշխ., վավ. N 12, էջ 56-57:

80 Տես նույն տեղում, վավ. N 13, էջ 57:

81 Տես նույն տեղում, էջ XXV:

82 Տես նույն տեղում, վավ. N 30, էջ 70:

Ռուսաստանի ռազմաքաղաքական լարված իրավիճակով պայմանավորված, որ հետևանք էր Հյուսիսային պատերազմի (1700–1721), սկզբում Օրին ռուսաց ցարի մոտ ընդունելության չի արժանացել, սակայն դրա փոխարեն նրան ընդունել և նրա հետ բանակցել է ռուսական կանցլեր, բոյար **Ֆեոդոր Գոլովինը**<sup>83</sup>:

Վավերագիր նյութերը ցույց են տալիս, որ Ռուսաստան ուղևորության սկզբնական շրջանում Օրին նույնպես ոգեշնչված չի եղել անվերապահորեն ռուսական օգնության, ուստիև ռուսական կողմնորոշման ջատագովը լինելու հեռանկարով, մանավանդ որ նա մելիքների կողմից լիազորված չի եղել բանակցելու ռուսական ղեկավար շրջանակների հետ: Այս առնչությամբ Աշ. Հովհաննիսյանը նկատել է տալիս. «Միայն Կանցլեր Գոլովինի բացորոշ ձևակերպած հարցաթուղթը ստանալուց յետո և նրա անմիջական թելադրանքի հետևողությամբ է, կարծես, որ Օրին ստիպված եղաւ դուրս գալ իր լիազօրութեան սահմաններից և Պետրոս Մեծին յատկացնել այն դերը, որ Պֆալցի կուրֆյուրստին էր վերապահուած»<sup>84</sup>: Ի. Օրին ակնկալել է, որ ցարը պետք է հայ մելիքներին խոստանար զանազան արտոնություններ ու հատկապես հավատքի ազատություն: Նա հանձնարարել է Մինաս վարդապետին ցարի անունից այնպիսի խոստումնալից գրություններ պատրաստել, որ հայ մելիքները հուսադրվեին, ինչը և իր նպաստը կբերեր հայերի ռուսական կողմնորոշման ամրապնդման հարցում<sup>85</sup>:

Ի. Օրին ռուսական բարձր իշխանություններին է հանձնել կուրֆյուրստի՝ ցարին ուղղված երաշխավորագիր-նամակը՝ խիստ գաղտնիության պայմաններում ուսումնասիրելու Հայաստանի ազատագրության հարցը և փորձելու իրագործել այդ գաղափարը: Հովհան Վիլիելմը նամակում մասնավորապես հայտնում էր, որ եթե ցարն արդարացի ու հնարավոր կհամարի ռազմարշավը Ռուսաստանի տարածքով, ապա այդքանով ինքը պատրաստ կլինի դրա իրականացմանը: Նույնպիսի ցանկություն էր հայտնել նաև Ավստրիայի կայսրը: Սակայն այստեղ էլ որոշակի կասկածներ է առաջացնում նման գրությունների օրինական լինելը:

Նախ՝ Ռուսաստանի պետական դեպարտամենտի արխիվում պահվում է 1700 թ. հոկտեմբերի 13-ի ամսաթվով Հովհան Վիլիելմի

83 Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Իսրայել Օրին և ազատագրական գաղափարը, էջ 317:

84 Հովհաննիսյան Աշ., Հայ-ռուս օրինատացիայի ծագման խնդիրը, էջ 54:

85 Տե՛ս Эзоб Г. А., նշվ. աշխ., վավ. N 54, էջ 102-106:

անունից մի գրություն՝ ուղղված **Պետրոս 1-ին** (Պյոտր Ալեքսեևիչ Ռոմանով, 1672–1725) ցարին: Դրանում ասվում էր, որ հայկական երկրից Պֆալց է գնացել հայ Իսրայել Օրին՝ ծագումով Պոռոջյան տոհմից, ով 19 տարի Եվրոպայում էր, և իբրև միջնորդ՝ Հովհան Վիլիելմն առաջարկում էր ցարին, որ ընդունի և լսի բանագնաց Օրուն<sup>86</sup>: Կարծում ենք, որ այս անցաթուղթը ևս կուրֆյուրստի և մյուսների անունից Օրին և Մինաս վարդապետը իրենք են «սարքել» կամ կեղծել տվել: Նույնպիսի մի անցաթուղթ էլ, ինչպես արդեն ասվեց, կազմվել է 1700 թ. դեկտեմբերի 8-ի ամսաթվով Ավստրիայի Լեոպոլդ 1-ին կայսեր անունից, որը դարձյալ հայտնվել է Ռուսաստանի պետական դեպարտամենտի դեսպանական ատյանում: Ի դեպ, 1701 թ. փետրվարի 9-ի ամսաթվով նույն Ավստրիայի կայսրը իբրև թե մի նամակ էլ է կազմել՝ այս անգամ արդեն ուղղված հայ մելիքներին, գրված լատիներենով: Բացի այդ՝ նույն՝ 1701 թ. փետրվարի 9-ի ամսաթվով (սակ փետրվարի 6-ի) կա հռոմեական (Ավստրիայի) կայսր Լեոպոլդ 1-ինի անունից գրված ևս մի լրացուցիչ շնորհաթուղթ՝ դարձյալ ուղղված Պետրոս Ալեքսեևիչ ցարին: Դրանում ևս Հովհան Վիլիելմի նամակի գրեթե նույն ոգով ու ոճով խոսվում է «Հայաստանցի Պոռոջյան տոհմի ժառանգորդ Ի. Օրուն անվտանգ ընդունելու և լսելու մասին»<sup>87</sup>:

Կ. Եզյանի կազմած ժողովածուի փաստաթղթերի բովանդակության և շարադրանքի ոճի համադրական վերլուծությունից ակնհայտ երևում է այս անցագրերի կեղծված լինելը: Ի դեպ, ծանոթանալով այդ նամակ-գրություններին, կանցլեր Ֆ. Գոլովինը և պետական բարձրաստիճան մյուս դեմքերն իրենք դա ակներև նկատել են, սակայն որոշակի նկատառումներով, ելնելով Ռուսաստանի հետաքրքրություններից, արգելք չեն հարուցել, հայ պատվիրակներին հետ չեն ուղարկել, այլ ընթացք են տվել նրանց ժամանմանը, տեղավորել են և ցանկացել նրանց միջոցով լրացուցիչ տեղեկություններ հավաքել կովկասյան ու ողջ պարսկա-թուրքական տարածաշրջանի ռազմաքաղաքական անցուդարձերի մասին, քանզի, Հյուսիսային պատերազմից զատ, Պետրոս ցարին որպես օրակարգային երկրորդ հարց հետաքրքրում էին կասպիական տարածաշրջան ներթափանցելու և այնտեղ հաստատվելու ծրագրերը:

86 Տե՛ս նույն տեղում, վավ. N 17, էջ 61-63:

87 Նույն տեղում, վավ. N 19, էջ 64-67:

1701 թ. հուլիսի 11-ին Ռուսաստանի պետական դեպարտամենտում Օրին գաղտնի գրույց է ունեցել բարոն Ֆ. Գոլովինի հետ: Հուլիսին ընթացել են բանակցություններ ռուսական կառավարության և Օրու միջև: Վերջինիս՝ ռուսերենին չտիրապետելու պատճառով բանակցությունների ընթացքում դժվարություններ են ծագել<sup>88</sup>: Այդ իսկ պատճառով Օրուն առաջարկվել է, որ նա իր տեսակետ-մտտեցումները ներկայացնի գրավոր:

Իր հերթին կանցլեր Ֆ. Գոլովինը Օրուն տվել է **5-կետանոց** հարցերի շարք՝ ի՞նչ ուժերով, ի՞նչ երթուղիներով պետք է ընթանար զորարշավը, գերմանական զորքը ո՞ւմ ենթակայության տակ պիտի ծառայության անցներ, սննդի ու հանդերձավորման ի՞նչ միջոցներով պիտի ապահովվեր զորքը, որտե՞ղ պիտի նրանք ձմեռեին: Դրա հիման վրա Օրին և նրա խոսքերը ռուսերեն թարգմանած երկու թարգմանիչները կազմում և հուլիսի 25-ին ցարական արքունիք են ներկայացնում ռազմական գործողությունների **18-կետանոց** մի հուշագիր-ծրագիր, որը պատմության մեջ հայտնի է Հայաստանի ազատագրության «Մոսկովյան ծրագիր» անվանումով<sup>89</sup>: Այս նոր ծրագրով՝ Հայաստանի ազատագրման գործում գլխավոր դերակատարությունը, որը «Պֆալցյան ծրագրով» վերապահվում էր Հովհան Վիլիելմին, արդեն վերապահվելու էր Պյոտր Ալեքսեևիչ ցարին: **Այսինքն՝ բովանդակային առումով սա հայոց ավանդական՝ եվրոպական կողմնորոշման գործնականացման փորձ էր, քանի որ ինքը՝ ռուսաց նոր ցարը նույնպես հանդես էր գալիս որպես եվրոպական միապետ:**

Ըստ «Մոսկովյան ծրագրի»՝ դեպի Անդրկովկաս արշավանքը իբրև թե պիտի սկսվեր 1701 թ. հոկտեմբերի սկզբին (ամսից ոչ ուշ), ցարը պիտի հատկացներ 25-հազարանոց (հեծյալ և հետևակ) կոզակային զորք երկու ուղղությամբ՝ ծովով՝ Կասպից ծովով, ու ցամաքով՝ Ճորա պահակով (Դերբենդով), դեպի Շամախի քաղաքը, որը իբրև թե պիտի գրավվեր երկու ժամում և այլն:

Կ. Եզյանի կազմած ժողովածուի մեկ այլ վավերագրի համաձայն՝ Օրին հուլիսի 14-ին ֆրանսերենով բարոն Ֆ. Գոլովինին տված պատասխանում նշում էր ապագա արշավանքի համար Նորին ցա-

88 Կ. Եզյանի կարծիքով՝ Օրին տիրապետել է արևելյան լեզուներից հայերենին, պարսկերենին և թուրքերենին, իսկ եվրոպական լեզուներից՝ ֆրանսերենին և, կարելի է ենթադրել, լատիներենին, գերմաներենին և իտալերենին (տես նույն տեղում, էջ LXXX):

89 Տես նույն տեղում, վավ. N 43, էջ 85-91:

րական մեծության 10–15 հազար, մեկ այլ տեղ՝ 20–25 հազար (կոզակային) գորքի մասին, իսկ կատարման համար որպես ժամկետ նշվում էր 15 օր՝ մինչև Շամախի հասնելը: Ըստ այդ տարբերակի՝ Շամախի քաղաքը կարող էր լինել գորքի՝ Հայաստան մուտք գործելու բանալին, իսկ գորարշավից հետո նրանք կարող էին ձմեռել Հայաստանում: Դեպի տարածաշրջան ու Հայաստան արշավող գորքերին քաջալերելու նպատակով Օրին դարձյալ ներկայացնում էր ուռձացված թվեր: Այսպես՝ բարոն Ֆ. Գոլովինին ուղղված մեկ այլ՝ հուլիսի 22–ի գրությունում նշվում էր, որ «անհավատների հողեր» ոտք դնելուն պես տեղերում մի 10 օրվա ընթացքում 100 հազարից ավելի հայեր ոտքի կկանգնեն, ինչպես նաև օգնության կհասնեն 30 հազար վրաց զինվորներ և այլն<sup>90</sup>: Այս ամենի կողքին հասկանալի միտումով շատ նվազ էր ներկայացվում պարսկական զինուժը Անդրկովկասում, ինչը իբր կոյուրացներ տարածաշրջանի նվաճումը ռուսների կողմից: Տարված չափազանց լավատեսությամբ՝ ծրագրի հեղինակ Օրին մեկ այլ առիթով անգամ ակնարկել է, թե Անդրկովկասի նվաճման համար պահանջվում էր ընդամենը 5 հազար մարդ<sup>91</sup>: Վերը բերվածը վկայում է Օրու ներկայացրած տվյալների՝ զուտ քարոզչական նպատակ հետապնդելու և դրանց աղաղակող միակողմանիության մասին: Հարց է ծագում՝ եթե 5–հազարանոց ռուսական զորախումբը բավական կարող էր լինել Անդրկովկասն ազատագրելու համար, մի՞թե վրաց թագավորն ու հայ մելիքները չէին կարող ոտքի հանել նշվածից բազմապատիկ ավելի հայ-վրացական զինյալ ուժեր, ինչպիսիք դուրս բերվեցին հետագայում՝ արդեն 1720–ական թթ. Արցախ–Սյունիքի ազատագրական պայքարի ժամանակ, և լուծել ազատագրության խնդիրը:

**Այսպիսով՝ վերը շարադրվածից դժվար չէ նկատել, որ Օրու կազմած Հայաստանի ազատագրության, այսպես կոչված, «Մուկոլյան ծրագիրը» զինուժի թվակազմի, կառուցվածքի, երթուղու և ծրագրվելիք գործողությունների վերաբերյալ վստահություն ներշնչող տվյալներ չի ներկայացրել և այս առումով անշուշտ գիջել է «Պֆալցյան ծրագրին»:**

90 Տես նույն տեղում, էջ XXVII–XXX, 76–82, 86–87, **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 428, «Армяно-русские отношения», т. 2, ч. 1, Ер., 1967, փաստ. 85, էջ 215:

91 Տես **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 77:

Ընդհանուր առմամբ հակասական թվերով հարուստ «Մոսկովյան ծրագրով» ստացվում էր, որ ռազմարշավի իրականացման հարցում շրջադարձ էր եղել: Դավանահավատալիքային հարցերը մի կողմ թողնելով՝ ռազմարշավում գլխավոր դերակատարությունը կայսրընտիր Հովհան Վիլիելմի փոխարեն արդեն վերապահվում էր Պետրոս ցարին, այսինքն՝ արշավանքը պետք է իրականացնելու ռուսական զորքը:

Նույն տարվա աշնանը՝ հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում, նախատեսված էր Մինաս վարդապետի ուղեկցությամբ Օրու հանդիպումը ցարի հետ: Նոյեմբերի 7-ին կամ 8-ին (իրականում՝ հոկտեմբերի 7-ին<sup>92</sup>) նա արժանացել է ցարի ընդունելությանը կանցլեր, բարոն Ֆ. Գոլովիինի տանը: Ի. Օրին ներկայացել է իբրև Պֆալցի կուրֆյուրստի բանագնաց, իհարկե ընծաներով (դրանց ցանկը վավերագրում տրված է)<sup>93</sup>: Հոկտեմբերի 28-ի վավերագրում (թիվ 49) նշված է, թե ընդունելության ժամանակ Օրին ինչ լեզվով պիտի խոսեր ցարի հետ: Որոշվել էր հանդիպումն անցկացնել ֆրանսերենի թարգմանչի միջոցով<sup>94</sup>: Նոյեմբերի 18-ի ամսաթվով հրապարակվել է ցարական հրամանագիրը այդ հանդիպման մասին<sup>95</sup>: Պետրոս ցարը ոչ միայն ծանոթացել է Օրու զեկուցագրին (ծրագրին), այլև անձամբ ունկնդրել է նրան<sup>96</sup>: Նշվում է, որ ռուսաց ցարը հավանություն է տվել Օրու ծրագրին, հուսադրել հայ պատվիրակությանը, որ Շվեդիայի դեմ պատերազմի հաջող ավարտից հետո կկազմակերպի հետագայում Կասպիական կամ Պարսկական կոչված արշավանքը: Կասպիական արշավանք կազմակերպելու և արևելահայությանն ազատագրելու առնչությամբ Կ. Եգյանի կազմած վավերագրերի ժողովածուում նշվում է, որ Պետրոս ցարը, ընդամաք գնալով Օրու ցանկությանը, միայն բանավոր ասել է (խոստացել է), թե աստծո զորությամբ շվեդների դեմ պատերազմի բարեհաջող ավարտից հետո կձեռնարկի Պարսկահայաստանի ազատագրման գործը<sup>97</sup>: Օրու բանակցությունների դրական հետևանքներից մեկն այն եղավ, որ ռուսական քաղաքական շրջանակները սկսեցին ավելի հաճախա-

92 Տե՛ս Արքահայր Ա. Գ., նշվ. աշխ., էջ 79, Հովհաննիսյան Պ., նշվ. աշխ., էջ 37:

93 Տե՛ս Эзоб Г. А., նշվ. աշխ., էջ 99:

94 Տե՛ս նույն տեղում, էջ 98:

95 Տե՛ս նույն տեղում, էջ 100:

96 Տե՛ս նույն տեղում, էջ LXXIII:

97 Տե՛ս նույն տեղում, վավ. N 59, էջ 110: Տե՛ս նաև Հովհաննիսյան Աշ., Հայ-ռուս օրինատացիայի ծագման խնդիրը, էջ 37-38:

կի բանագնաց պատվիրակներ գործուղել Պարսկաստան ու կովկասյան տարածաշրջան՝ ավելի մոտիկից շփվելու և նախապատրաստելու ռազմարշավը: Նման պատվիրակներից մեկն էլ հայազգի Միրոն Վասիլեն էր, որը 1702 թ. ամռանը Աստրախանով և Կասպից ծովով հասավ Հայաստան՝ իր հետ բերելով հուսադրող նամակներ, և հանդիպումներ ունեցավ մելիքների ու հոգևոր հայրերի հետ:

## 7. Եսայի կաթողիկոսի և հայ մելիքների ռուսական կողմնորոշման հարցի շուրջ

Ի. Օրու նպատակադրումների հաջողությունը, բացի արտաքին ազդակներից, ոչ պակաս կախված էր նաև նրանից, թե բուն Հայաստանում հայոց կաթողիկոսներն ու մելիքական շրջանակները ինչպես կարձագանքեին դրանց, քանզի, ինչպես արդեն գիտենք, Ամենայն հայոց կաթողիկոս **Նահապետ Եղեսացին** (1691-1705) առանձնապես ոգևորված չէր Օրու գաղափարներով, իսկ Արցախ-Սյունիքի մելիքներն էլ նրան համապատասխան փաստաթղթերով ուղևորել էին միայն դեպի Արևմտյան Եվրոպա:

Նշենք, որ հենց դարասկզբից Հայաստանի ազատագրության գործին սկսում է առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերել Ղարաբաղը, հատկապես Գանձասարի կամ Աղվանից նորընտիր հայրապետ **Եսայի Հասան-Ջալալյանը** (1702-1728): 1702 թ. փոխարինելով վախճանված Սեմեոն կաթողիկոսին<sup>98</sup>՝ Եսայի կաթողիկոսը սկսում է ջանքեր թափել ու փորձել կապեր հաստատել Ի. Օրու հետ: Լեոն Եսայի կաթողիկոսին բնութագրում է որպես 18-րդ դարի սկզբների հայ ազատագրական շարժման «խոշոր երախտավորներից մեկը»<sup>99</sup>: Նամակագրական կապերը և վավերագիր նյութերը վկայում են, որ Ի. Օրին իր գաղափարներով ու գործելակերպով զգալի դեր է խաղացել Եսայի կաթողիկոսին և առհասարակ արցախահայ վերնախավին քաղաքականապես դեպի Ռուսաստան կողմնորոշելու հարցում: Եվ պատահական չէր, որ հենց դարասկզբին (1709/10 թթ.) Եսայի կաթողիկոսը մեծ ցանկություն հանդես բերեց մեկնելու Մոսկվա և հայ

98 Եսայու կաթողիկոսական իրավունքները հաստատվել էին Սուլթան Հուսեյն շահի դեռ 1701 թ. աշնանային հրովարտակով (տես **Մաղայան Ա.**, նշվ. աշխ., էջ 134):

99 Լեոն, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 88:

ժողովրդի ազատագրության հարցով անձամբ հանդիպելու Պետրոս ցարին:

Կ. Եզյանի կազմած ժողովածուում կա **1703 թ. մայիսի 27-ի** ամսաթվով Ղարաբաղի մելիքների անունից մի շնորհակալական նամակ-ուղերձ՝ ուղղված ռուսաց Պետրոս ցարին, Օրու միջոցով իրենց հուսադրելու մասին: Փաստաթղթում նշվում է, որ իրենք՝ մելիքները, Մինաս վարդապետի միջոցով լուր են ստացել, որ **բարի ցարը** «իրենց ցավին դարման կանի»<sup>100</sup>: Նշվում է, որ նրանք տվել են «Մինաս վարդապետին և պարոն Իսրայելին ձերմակ թուղթ, որ ինչ կու պատասխանեն առ քո ինքնակալութեանդ հետ ամենից ինչ կողմանէ մեր գրովն առ մեզ խապուլ է»<sup>101</sup>: Սույն փաստաթղթի՝ իբրև Սյունիքի, իսկ լայն իմաստով՝ Ղարաբաղի մելիքների կողմից գրված լինելը դարձյալ խնդրահարույց է: Կ. Եզյանն իր ժողովածուի ներածական մասում նշում է, որ այս նամակը Եսայի կաթողիկոսի գրածն է՝ ուղղված **բարի ինքնակալ ցարին**, որում կաթողիկոսը «աղոթում էր, որ ցարը շուտ գա և ազատի իրենց»<sup>102</sup>: Բայց բավարար հիմքեր կան պնդելու, որ հայերենով շարադրված 4-էջանոց (էջ 154-157) այդ աղերսագիր-նամակը, ըստ ամենայնի, Մինաս վարդապետի գրածն է, որը հավանաբար օգտվել է «ձերմակ թղթի» իրավունքից: Սա, հավանաբար Օրու գիտությանը, Մինաս վարդապետի արած հերթական կեղծիքներից է: Թեև այս նամակ-ուղերձում էլ դարձյալ շեշտվում է պրն Իսրայել Օրու՝ Պոռոջյան իշխանական տոհմից սերված լինելը, սակայն մի քանի անգամ նշվում է Մինաս վարդապետի և հետո միայն Իսրայել Օրու անունը: Վերջում ոչ թե Եսայի կաթողիկոսի, այլ **8 մելիքների** անուններն են, մելիք Սաֆրազի անունը չկա<sup>103</sup>, մյուսները կրկնված են հիմնականում 1699 թ. ապրիլի 29-ի Անգեղակոթի ժողովի նամակից: Բացի մելիք Սաֆրազի անունից՝ փաստաթղթում չկա ևս երկու մելիքի անուն, սակայն ավելացվել է մեկ ուրիշի՝ Նարին բեգի որդի Շահնազարի անունը<sup>104</sup>:

Մելիքների կողմից 1699 թ. **ապրիլի 29-ի** Հովհան Վիլիելմին ուղղված նամակ-լիազորագրի (փաստաթուղթ թիվ 3) և 1703 թ. **մա-**

100 ԶՅՅ Գ. Ա., նշվ. աշխ., վավ. N 98, էջ 154:

101 Նույն տեղում, էջ 154-155:

102 Նույն տեղում, էջ XXXVII:

103 Լեոյի կարծիքով՝ մելիք Սաֆրազը հավանաբար մահացել էր (տես **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 434):

104 Տես ԶՅՅ Գ. Ա., նշվ. աշխ., էջ 9, 157:



**յիսի 27-ի** այս անգամ արդեն Պետրոս ցարին ուղղված նամակադերսագրի (փաստաթուղթ թիվ 98) բովանդակությունների համեմատությունից դժվար չէ նկատել, որ քաղաքական կողմնորոշման առումով մելիքների շրջանում կարծես «շրջադարձ» էր կատարվել: Դա կասկած է առաջացնում և հիմք տալիս դարձյալ պնդելու, որ մայիսի 27-ի նամակը ոչ թե մելիքներն են գրել, այլ, առանց նրանց գիտության, Մինաս վարդապետն ու Իսրայել Օրին են իրենց նախաձեռնությամբ պատրաստել և ներկայացրել ցարին, կանցլեր Ֆ. Գոլովինին և ռուս բարձրաստիճան մյուս իշխանավորներին: Նշանակում է՝ Օրին և Մինաս վարդապետը որոշակի աշխատանքներ են տարել, որպեսզի հատկապես արցախահայ շրջանակներին կողմնորոշեն դեպի Ռուսաստան՝ դրանով սպասումների մթնոլորտ ստեղծելով ապագա արշավանքի համար:

#### 8. Գնդապետ Ի. Օրու վերադարձը Արևմտյան Եվրոպա

Գրականությունից հայտնի է, որ Պետրոս 1-ինը Օրուն շնորհել է **գնդապետի** սպայական աստիճան: Այս մասին տեղեկություններ կան Կ. Եզյանի կազմած ժողովածուի 108-րդ (իտալերեն) և 109-րդ (ռուսերեն) փաստաթղթերում<sup>105</sup>: 1703 թ. նոյեմբերի 15-ին Ի. Օրին նամակով դիմել է Ֆ. Գոլովինին՝ միջնորդելու իրեն արտոնագիր տալ՝ ա) Ավստրիա և Գերմանիա (Վիեննա և Դյուսելդորֆ) գործուղվելու և բ) կարաբինակիրների գնդապետի աստիճան շնորհելու մասին: Օրու ցանկությունը ոչ թե զինվորական գունդ ղեկավարելն էր, այլ բանակցելու համար ընդամենը ցարական գնդապետի տիտղոս ստանալը: «Ցարի նվաստ ծառա» Ի. Օրին դիմել է Ֆ. Գոլովինին նաև, որ իր մարդիկ մնան Ռուսաստանում, իսկ ինքը մեկնի Եվրոպա, որպեսզի այնտեղ զբաղվի հռոմեական (Ավստրիայի) կայսրի և Պֆալցի կուրֆյուրստի հետ ապագա արշավանքի կազմակերպման հարցերով: Բացի այդ՝ նա նշում է, որ ամուսնացած է, ինչը հաստատվում է Կ. Եզյանի ժողովածուով, Դյուսելդորֆում ունի ընտանիք՝ **երկու որդի**, որոնց կուզենար տեղափոխել Ռուսաստան և տեղում սովորեցնել տար ռուսաց լեզուն և

105 Տե՛ս նույն տեղում, վավ. N 108, էջ 174-175 և վավ. N 109, էջ 175-176:

այլն<sup>106</sup>: 1703 թ. դեկտեմբերի 6-ի ցարական հրամանագրով Օրոն շնորհվում է իր խնդրած գնդապետ-կարաբիների սպայական աստիճանը<sup>107</sup>:

Այս ամենից բացի՝ հայտնի է, որ Կասպիական արշավանքի համար նախապատրաստական-հետախուզական աշխատանքներ կատարելու նպատակով ծրագրվել էր, որ Պարսկաստան ուղևորվելուց առաջ Օրին նախ պետք է մեկնել Եվրոպա մարտավարական այն նկատառումով, որ Պարսկաստան մեկնելու ժամանակ կասկածներ չառաջացնել: Նա Հռոմի պապից պարսից շահին ուղղված գրություննամակ պիտի վերցնել իբրև թե նրա տերությունում հպատակ քրիստոնյաների հանդեպ կրոնական ճնշումներ ու բռնություններ թույլ չտալու վերաբերյալ:

Ցարական արտոնագրով Իսրայել Օրու՝ արտասահման մեկնելու մասին կա 1704 թ. հունվարի 23-ի ամսաթվով ևս երկու փաստաթուղթ՝ ուղղված հռոմեական (Ավստրիայի) կայսր Լեոպոլդ 1-ինին և Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին: Ընդ որում, Օրին ճանապարհին՝ Վրաստանում, իր հետ վերցրել էր վրաց թագաժառանգ, Իմերեթի նախկին թագավոր Արչիլ 2-րդի նամակը՝ ուղղված Ավստրիայի կայսրին և Պֆալցի կուրֆյուրստին, որում Արչիլը խնդրում էր վերջիններիս միջնորդել շվեդների առջև Նարվայի տակ նրանց մոտ գերի ընկած իր որդուն՝ գեներալ Ալեքսանդրին ազատ արձակելու վերաբերյալ<sup>108</sup>:

Եվ ահա գնդապետ Ի. Օրին արդեն 1704 թ. փետրվարի 10-ին ուղևորվում է Եվրոպա<sup>109</sup>: Նա Մոսկվայում է թողնում Մինաս վարդապետին և երկու թարգմանչի: Ի. Օրին նախ պիտի այցելել հռոմեական (Ավստրիայի) կայսր Լեոպոլդին, այնուհետև՝ Հռենոսի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին<sup>110</sup>: Կ. Եզյանի կազմած ժողովածուում կարող ենք գտնել Հովհան Վիլհելմի 1705 թ. ապրիլի 2-ի նամակ-ուղերձը՝ ուղղված պարսից շահին, հորդորանքով, որ նա իր տիրույթներում ապրող քրիստոնյաներին մեղմ վերաբերվի<sup>111</sup>: Հաջորդ փաստաթուղթը Օրու՝ Ամստերդամից ուղարկած նամակն է՝ ուղղված բարոն

106 Տե՛ս նույն տեղում, էջ LXXVI, վավ. N 109, էջ 175-176: Տե՛ս նաև Լեո, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 431:

107 Տե՛ս Эсоб Г. А., նշվ. աշխ., վավ. N 117, էջ 185-186:

108 Տե՛ս նույն տեղում, վավ. N 126, էջ 194, 199-200:

109 Տե՛ս նույն տեղում, վավ. N 128, էջ 203-204:

110 Տե՛ս նույն տեղում:

111 Տե՛ս նույն տեղում, վավ. N 135, էջ 210:

Ֆ. Գոլովինին, ինչը հաստատում է Հովհան Վիլիելմի՝ պարսից շահին ուղղված ուղերձի իսկությունը<sup>112</sup>: Օրին մեկնել է նաև Հռոմ և կուրֆյուրստի խոստովանահոր միջոցով ստացել Հռոմի Կղեմես 11-րդ պապի (1680-1721)՝ 1705 թ. հուլիսի 15-ի նույնաբովանդակ հավատարմագիրը՝ ուղղված շահ Սուլթան Հուսեյնին<sup>113</sup>: Ի դեպ, Լեոյի հաղորդմամբ, Արևմուտքում գտնվելու ընթացքում Ի. Օրին գնել էր նաև 15-20 հազար ռուբլու զենք և զինական այլ պարագաներ<sup>114</sup>: Այդ ամենից հետո միայն նա սկսեց դեպի Պարսկաստան առաքելության պատրաստություն տեսնել:

### 5. Ի. Օրու առաքելությունը Պարսկաստանում, վերադարձը և մահը

Արդեն 1706 թ. Օրին վերադառնում է արտասահմանից և հոկտեմբերի 29-ի նամակով խնդրում Պյոտր Ալեքսեևիչ ցարին թույլ տալ իրեն ուղևորվել Պարսկաստան՝ ապագա արշավանքի համար նախապատրաստական-հետախուզական աշխատանքներ կատարելու: Օրու առաքելության խնդիրներից էր նաև ճշտել տարածաշրջանում ռուսական զորքերի արշավանքի ուղիները, ուսումնասիրել տեղի ազգաբնակչության էթնիկ կազմը և քաղաքական տրամադրությունները և այլն: 1707 թ. ապրիլին ցարի հանձնարարականով գնդապետ Ի. Օրուն տրվում է անցաթուղթ՝ մեկնելու Պարսկաստան՝ շահի մոտ, անհրաժեշտ միջոցներով ու պարագաներով<sup>115</sup>:

Երկարատև պատրաստությունից հետո՝ 1707 թ. հունիսին, Օրին, վերցնելով Հռոմի պապի նամակը, տարբեր ազգեր ներկայացնող 37 (որոշ տվյալներով՝ 50) հոգուց բաղկացած դեսպանախմբով Աստրախանով ուղևորվում է Պարսկաստան: Մինաս վարդապետը մնում է Մոսկվայում՝ դեսպանության առաքելության վերաբերյալ հարկ եղած տեղեկությունները կառավարությանը հաղորդելու: Ի. Օրու գլխավորած դեսպանությունը 1708 թ. փետրվարին հասնում է Շամախի: Սակայն պարսից իշխանությունները, կասկածներ ունենալով, երկար շուրջ երկու տարի, դեսպանությանը սպասել են տալիս: Հայ մեծ պատմավիպասան Ռաֆֆին իր «Խամսայի մեխրությունները» աշխա-

112 Տե՛ս նույն տեղում, վավ. N 136, էջ 212:

113 Տե՛ս «Հայոց պատմություն», հատ. 3, գ. 1, էջ 24:

114 Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 437:

115 Տե՛ս Эвс Г. А., նշվ. աշխ., վավ. N 141, էջ 219, N 147, էջ 230-232:

տության մեջ տեղեկացնում է, որ Շամախիի կառավարիչ, ազգությամբ հայ Մուսաբեկյան Հյուսեին խանը իմաց էր տվել շահին, որ «Օրին աշխատում է հայոց թագավորություն հիմնել, պարսիկների իշխանությունը ոչնչացնել և այլն»<sup>116</sup>: Այդուհանդերձ, այդ ընթացքում մեծ զգուշավորությամբ, կասկածների տեղիք չտալով, Օրին տարածաշրջանում, այդ թվում նաև՝ հայ մելիքների հետ, նախապատրաստական որոշ աշխատանքներ է տանում, սակայն չի բացահայտում իր առաքելության բուն նպատակները:

1709 թ. հուլիսի 7-ի ամսաթվով կա Ամենայն հայոց կաթողիկոս Ալեքսանդր Զուղայեցու (1707-1714) անունով մի վավերագիր հրովարտակ՝ ուղղված ցար Պյոտր Ալեքսեևիչին, Ի. Օրու՝ Էջմիածին ժամանելու մասին<sup>117</sup>: Կաթողիկոսի հրովարտակի հայերեն բնօրինակը չկա, կա միայն դրա ռուսերեն օրինակի տեքստը: Լեոյի կարծիքով՝ Օրին է խնդրել, որ կաթողիկոսը գրի Պետրոս ցարին ուղղված մեծարման մի թուղթ<sup>118</sup>: Դրանում Հիսուս Քրիստոսի և կաթողիկոսի անունից մեծարվում է Պյոտր Ալեքսեևիչ ցարը: Հրովարտակում նշվում է, որ Սբ Էջմիածնում էր Ի. Օրին, որը պիտի մեկներ Պարսկաստան: Կաթողիկոսը, սակայն, ոչ մի ակնարկ չի արել Օրու առաքելության նպատակների մասին՝ հավանաբար զգուշանալով քաղաքական անցանկալի հետևանքներից: Կաթողիկոսի նամակին 1709 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին հետևել է նաև պարսից Սուլթան Հյուսեին շահի արաբատառ նամակը (հրովարտակ)՝ հասցեագրված Պյոտր Ալեքսեևիչ ցարին: Կա նաև դրա ռուսերեն թարգմանությունը, որում խոսվում է Նորին մեծություն ցարի անցագրով և պայծառափայլ Հռոմի պապի գրություն-նամակով Ի. Օրու՝ Պարսկաստան ժամանելու մասին<sup>119</sup>:

Երկար սպասումներից հետո՝ 1709 թ. ամռան կեսերին, Օրու պատվիրակությունն ի վերջո մուտք է գործում պարսից տերության բուն տարածք, հասնում մինչև մայրաքաղաք Սպահան: Չնայած եվրոպական կաթոլիկ միսիոներների՝ Օրու դեմ ծավալած զրպարտչական քարոզներին, այնուամենայնիվ, Լեոյի բնորոշմամբ՝ «մեղկ ու

116 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 10, Եր., 1959, էջ 182:

117 Տե՛ս Զոօբ Դ. Ա., նշվ. աշխ., վավ. N 159, էջ 243-244:

118 Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 439:

119 Տե՛ս Զոօբ Դ. Ա., նշվ. աշխ., վավ. N 160 և 161, էջ 245-247:

թույլ»<sup>120</sup> Սուլթան Հուսեին շահը հավուր պատշաճի ընդունելություն է կազմակերպում Օրու պատվին՝ իբրև Հռոմի պապի և Պետրոս ցարի դեսպանորդի, սակայն հնարավորինս շուտ էլ ճանապարհում է իր երկրից<sup>121</sup>: Հայ դեսպանին հնարավորություն չի տրվել երկար մնալու մայրաքաղաքում: Արդեն 1709 թ. սեպտեմբերին Օրին Շամախիում էր:

Հավելենք, որ Օրին Պարսկաստանից Աստրախան վերադառնալիս մտադրություն է ունեցել հայ երիտասարդներից կազմելու մի զորագունդ՝ հայրենիքի ազատագրության նպատակով ծրագրվելիք արշավանքի համար<sup>122</sup>: Սպահանից վերադարձի ճանապարհին նա այցելել է Ղարաբաղ, հանդիպումներ ունեցել հայ հոգևոր և աշխարհիկ տերերի հետ ու փորձել հաշտեցնել Գանձասարի՝ միմյանց հակաթոռ դարձած Եսայի և Ներսես կաթողիկոսներին:

Արդեն 1710 թ. հունիսի 16-ին Օրին նամակով դիմում է Ռուսաստանի նոր կանցլեր, կոմս **Գ. Գոլովկինին**՝ վերադառնալու Ռուսաստան և զեկույց ներկայացնելու Պարսկաստան կատարած իր ուղևորության ու տարածաշրջանում ընթացող քաղաքական զարգացումների մասին<sup>123</sup>:

Վավերագիր նյութերից պարզվում է, որ վերադարձին պարսից շահը Օրուն է հանձնել Հռոմի պապին ուղղված պատասխան բարեկամական նամակը, որը, սակայն, Օրու մահից մի քանի տարի անց միայն՝ 1714 թ., Մինաս վարդապետն է փորձել տանել ու հանձնել հասցեատիրոջը: Դա երևում է կանցլեր, կոմս Գ. Գոլովկինին հասցեագրված Մինաս վարդապետի նամակից<sup>124</sup>:

Գանձասարի Եսայի կաթողիկոսը, տեսակցելով Օրու հետ, անչափ ոգևորվում է հայրենիքի ազատագրման գաղափարով և որոշում, ինչպես արդեն ասվել է, նրա հետ ճանապարհվել Ռուսաստան, որպեսզի անձամբ ցարին հայտնի հայ ժողովրդի ձգտում-ցանկությունը: Օրին 1711 թ. փետրվարի 28-ի զեկույցով հաղորդում է Պետրոս ցարին Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի հետ միասին Ռուսաստան գնալու մասին: Միաժամանակ նշվում էր տեղում Աստրախանի իշխանությունների վատ պահվածքի, նաև

120 **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 432:

121 Տե՛ս «Հայոց պատմություն», հատ. 3, գ. 1, էջ 25:

122 Տե՛ս **Հովհաննիսյան Աշ.**, Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը, էջ 409:

123 Տե՛ս **Эзов Г. А.**, նշվ. աշխ., վավ. N 164, էջ 252, N 168, էջ 257-258:

124 Տե՛ս նույն տեղում, վավ. N 201, էջ 310-311:

նավերի ու լաստանավերի անսարք ու փտած լինելու, դրա հետևանքով խորտակվելու և ապրանքների՝ բաց ծով թափվելու մասին<sup>125</sup>:

1711 թ. մեկ այլ՝ մարտի 1-ի նամակով «Ցարի խոնարհ ծառա» Օրին դարձյալ գաղտնի տեղեկություններ է հաղորդում Արևելքում տիրող ռազմաքաղաքական վիճակի մասին<sup>126</sup>: Նույն թվականի մարտի 20-ի նամակ-խնդրագրով «Ծառա Մինաս վարդապետը դիմել է Տիրակալ ցարին»՝ թույլ տալու Օրուն իր մարդկանցով և իրերով Աստրախանից անարգել անցնել Մոսկվա. իրերի մեջ նշված են 12 փոքր թնդանոթ, 25 պարսկական ձի, որոնք գնվել էին ցարին նվիրելու համար<sup>127</sup>:

Կ. Եզյանի կազմած ժողովածուի 176-րդ փաստաթղթից հետևում է, որ 1711 թ. սեպտեմբերի 25-ի ամսաթվով կա Մինաս վարդապետի մեկ այլ զեկույց այն մասին, որ Աստրախանում անբարեխիղճ պաշտոնյաները ճնշումներ են գործադրել Ի. Օրու նկատմամբ՝ Պարսկաստանից բերած ապրանքների, նժույզների, գորգերի և այլ իրերի համար պահանջելով մաքսատուրք: Դրա համար Մինաս վարդապետը կրկին խնդրանքով դիմել է ռուսաց բարձր իշխանություններին՝ թույլ տալու Օրուն ազատ մուտք գործել Մոսկվա: Ի պատասխան դրա՝ սեպտեմբերի 29-ին տրվել է ցարական հրամանագիրը՝ Ի. Օրու համար իր մարդկանցով և իրերով Աստրախանից անարգել և առանց մաքսատուրք գանձելու ազատ մուտք ապահովելու դեպի Մոսկվա<sup>128</sup>: Հրահանգվել է Կազանի նահանգապետ Պ. Ապրակսինին թույլատրել Ի. Օրուն անարգել Աստրախանից անցնել Մոսկվա<sup>129</sup>: Բայց մինչ այդ ամենին ընթացք տալը պարզվում է, որ ավելի վաղ՝ օգոստոսին, Օրին արդեն մահացել էր:

Կազանի նահանգապետ Պ. Ապրակսինը 1711 թ. նոյեմբերի 7-ի գրությամբ տեղեկացնում է ինքնակալ մեծ Տեր Պյոտր Ալեքսեևիչի՝ դեռ օգոստոսին Ի. Օրու մահվան և թաղման մասին: Ընդ որում, հոգեհանգիստը տեղի էր ունեցել Աստրախանի հայկական եկեղեցում, իսկ թաղումը՝ եկեղեցու բակում: Նահանգապետը հայտնում էր. «Աստրախանի պարետի տեղակալ Միխայիլ Չիրկովը սեպտեմբե-

125 Տե՛ս նույն տեղում, վավ. N 167, էջ 256:

126 Տե՛ս նույն տեղում, վավ. N 168, էջ 257-258:

127 Տե՛ս նույն տեղում, վավ. N 172, էջ 269-270:

128 Տե՛ս նույն տեղում, վավ. N 176, էջ 272-273, N 178, էջ 274:

129 Տե՛ս նույն տեղում, վավ. N 179, էջ 275-276:

րին ինձ նամակ է ուղարկել, որում գրում է, որ Հռոմի պապի պատվիրակ (բանագնաց) Ի. Օրին Պարսկաստանից ծովով վերադարձավ Աստրախան, մեկ ամսից ավելի ապրեց և օգոստոսին մահացավ, հուղարկավորված է Աստրախանի հայկական եկեղեցու գավթում իրենց օրենքով»<sup>130</sup>: Եսայի կաթողիկոսը հուղարկավորել է Օրուն և տրտում վերադարձել հայրենիք: Որքան էլ ցավալի է, հարկ է փաստել, որ հետագայում՝ 1742 թ., Պետրոս Մեծի դստեր՝ Ելիզավետա Պետրովնա կայսրուհու հրամանով Աստրախանի հայկական եկեղեցին, որի բակում ամփոփված էր Օրու աճյունը, քանդվել է, իսկ առաջնորդարանն էլ՝ փակվել<sup>131</sup>: Մեր ժամանակներում պրոֆ. Ա. Աբրահամյանը ցավով նշում էր, որ, դժբախտաբար, այդպես էլ հնարավոր չեղավ գտնել Ի. Օրու գերեզմանը<sup>132</sup>:

Ի. Օրու առեղծվածային մահվան առնչությամբ նրա արկածալից կյանքի՝ հակասական դրվագներով լի պատմությանը խորագիտակ ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը նշում է, որ 1711 թ. օգոստոսի սկզբին Օրին Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի հետ ժամանում է Աստրախան, սակայն այդ նույն ամսվա վերջին անսպասելիորեն, չպարզված հանգամանքներում հանկարծամահ է լինում, որոշ տեղեկություններով՝ թունավորումից, որոշ տեղեկություններով էլ նրա մահը կապված էր առևտրատնտեսական գործունեության և այդ ոլորտում հակառակորդներ ունենալու հետ<sup>133</sup>: Ի. Օրու անսպասելի մահը խափանում է նաև Եսայի կաթողիկոսի՝ ցարին հանդիպելու մտադրությունը:

Պետք է նշել, որ, օրինակ, Կ. Եզյանի ներկայացրած փաստաթղթերում՝ սկսած 181-րդից, Օրու մահից հետո այլևս գրեթե չի խոսվում նրա քաղաքական գործունեության մասին: Բերված փաստաթղթերում Մինաս վարդապետը, ցարական իշխանավորները և ուրիշներ նրան պատկերում են սոսկ որպես վաճառական՝ Պարսկաստանից նժույզներ, մետաքս, գորգեր և այլ թանկարժեք իրեր վաճառող, խոսվում է նրա առևտրական գործերի, կուտակած պարտքերի և համանման այլ բաների մասին, ինչը, անշուշտ, էապես ստվերում է հայ ազատագրական պայքարին անմնացորդ

130 Նույն տեղում, վավ. N 180, էջ 277-278:

131 Տե՛ս Ակրտունյան Լ., նշվ. աշխ., էջ 27:

132 Տե՛ս Աբրահամյան Ա. Պ., նշվ. աշխ., էջ 117:

133 Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը, էջ 414-415:

նվիրվելու և գործելու Օրու առաքելությունը: Բայց և պետք է ընդունել այն հանգամանքը, որ, իր տևական գործունեության ընթացքում զբաղվելով նաև վաճառականությամբ, նա դա ծառայեցրել է ոչ թե անձնական հարստացման նպատակին, այլ հայրենիքի ազատագրության գործին: Բազմավաստակ պատմաբան Լեոն, ամփոփելով Ի. Օրու կյանքի ու գործունեության ողիսականը և անսպասելի վախճանը, ցավով եզրակացնում է, որ դրանով «**Հայաստանի ազատության գաղափարը մի սաստիկ հարված ստացավ**»<sup>134</sup>:

Այսպիսով՝ անսպասելի մահվամբ ընդհատվեց հայ ժողովրդի՝ օտարի լծից ազատագրմանը և հայկական պետականության վերականգնմանը միտված Ի. Օրու արգասավոր գործունեությունը: Անցյալի ավանդույթի ուժով սկզբում, անգամ դավանափոխ լինելու պայմանով, Հայաստանի ազատագրության հույսը կապվեց արևմտաեվրոպական պետությունների օգնության և աջակցության հետ: Սակայն հետագա քաղաքական գործընթացների, դեպքերի ու իրադարձությունների տրամաբանական ընթացքով դիմաշրջում կատարվեց դեպի աշխարհագրորեն Հայաստանին ավելի մոտ, ուստի գործնական աջակցության առումով իրատեսական համարվող երկիր՝ Ռուսաստան: Դրանով էլ, փաստորեն, հայ իրականության մեջ առարկայորեն սկիզբ դրվեց հայ ժողովրդի ռուսական կողմնորոշմանը: Այդ տեսլականը հետագայում ավելի արմատավորվեց և հայ հասարակական-քաղաքական մտքում ու կյանքում դարձավ տիրապետող հոսանք-մտայնություններից մեկը: Ուստի անառարկելի է, որ, Ի. Օրու գործունեությամբ պայմանավորված, հայ հանրության մեջ աստիճանաբար ձևավորվեց ռուսական քաղաքական կողմնորոշումը: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե սոցիալապես ու քաղաքական մտքի առումով բազմաշերտ հայության մեջ այն եղել է միակ ու միշտ գերիշխող հոսանքը: Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման երեքհարյուրամյա պատմության փորձն ու դասերը ցույց են տալիս, որ այդ կողմնորոշումը միանշանակ չի եղել: Այն իր հետ բերել է ոգևորության պահեր, քաղաքական վայրիվերումներ, նաև հիասթափություններ:

---

134 Լեոն, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 441:



## Եզրակացություններ

Այսպիսով՝ 17-րդ դարի վերջերի և 18-րդ դարասկզբի հայ ազատագրական շարժման ու պայքարի նշանավոր գործիչ Ի. Օրին իր անձնվեր, սակայն հակասական, երբեմն էլ արկածալի գործունեությամբ համարվում է հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման սկզբնավորողը: Քաղաքական կողմնորոշման՝ Արևմուտքից դեպի Ռուսաստան անցման ճանապարհին նա ռուսական քաղաքական շրջանակներին Հայաստանի ազատագրման գործում շահագրգռելու համար երբեմն անհրաժեշտաբար դիմել է փաստաթղթերի կեղծման: Նրա ծավալած Արևմուտք-Ռուսաստան քաղաքական, բանակցային, դիվանագիտական գործունեության փաստավավերագիր արձանագրումները, Հայաստանի ազատագրության երկու՝ «Պֆալցյան» և «Մոսկովյան» ծրագրերը, չնայած տվյալ ժամանակի համար իրենց անհրատեսականությանը, հարուստ նորույթ են հայ քաղաքական մտքի պատմության համար: Օրին առաջին գործիչն էր, որ հայ ազատագրական շարժումը և դիվանագիտական բանակցությունները դուրս բերեց հոգևորականների կրոնադավանաբանական բանավեճերի մակարդակից և դրեց գործնական, ռազմաքաղաքական հիմքերի վրա:

Ի. Օրու վերջնանպատակը ամբողջական Հայաստանի ազատագրումն էր պարսկա-թուրքական բռնատիրությունից և ինքնավար հայկական պետության (թագավորության) վերականգնումը, սկզբնապես՝ արևմտաեվրոպական տերությունների, այնուհետև՝ Ռուսաստանի հովանու ներքո, ինչի մասին փաստում են նրա կազմած երկու ծրագրերը, ինչպես նաև Պետրոս ցարին ներկայացրած «Մեծ Հայաստանի» քարտեզը:

Բանասեր, պատմաբան Կ. Եզյանի կազմած արժեքավոր փաստավավերագրական ժողովածուն և օժանդակ այլ նյութեր բերում են այն հետևությանը, որ **հայերի ռուսական կողմնորոշմանը սկիզբ է դրվել ոչ թե 17-րդ դարի երկրորդ կեսին կամ անգամ 18-րդ դարասեմին, այլ 1720-ական թվականներին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Պետրոս Մեծի կողմից ձեռնարկվելիք արշավանքի ակնկալիքով բռնկվեց Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարը: Սա նշանակում է, որ հայ ժողովրդի ռուսական քաղաքական**

**կողմնորոշումն ունի երեք դարի պատմություն:** Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե հայությունը մշտապես առաջնորդվել է այդ կողմնորոշմամբ: Պատմագիտական անաչառությունը պահանջում է արձանագրել, որ ժամանակի ու հանգամանքների հրամայականով, հատկապես 19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի սկզբներին՝ Հայկական հարցի արժարձումների ընթացքում, հայ հասարակական-քաղաքական շրջանակները մեծապես ու անհրաժեշտաբար հանդես են բերել նաև այլ՝ արևմտյան կողմնորոշում, սակայն երկու դեպքում էլ չեն հասել էական դրական արդյունքի:

Միաժամանակ պետք է նկատել, որ հայ ժողովրդի արևմտաեվրոպական, իսկ հետագայում ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում հարկ չկա խոր անջրպետ անցկացնել, քանզի արդեն Պետրոս Մեծի ժամանակներից Ռուսաստանն իր քաղաքական, պետաիրավական ու մշակութային արժեքային համակարգով հավակնում էր դառնալու եվրոպական երկիր: Իսկ աշխարհագրական առումով նա ավելի մոտ էր Հայաստանին, ուստի ավելի իրատեսական էր Հայաստանի ազատագրումը Ռուսաստանի կողմից: Այլ խոսքով, եթե համադրենք ու արժևորենք քաղաքական երկու երթուղիներով ընթացած Ի. Օրու առաքելությունը, ապա նման կողմնորոշումը, մեծ հաշվով, կարելի է համարել **եվրոպա-ռուսական**, ինչը քաղաքակրթական բովանդակություն է հաղորդում նրա առաքելությանը:

Փաստավավերագիր նյութերի և տարածաշրջանի պատմաքաղաքական իրադարձությունների համադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ Ի. Օրու դարաշրջանում Հայաստանը արտաքին ուժերի օգնությամբ ազատագրվելու իրական հեռանկար չի ունեցել:

Ի. Օրու ժամանակներում հայ ժողովրդի շրջանում դեռևս չէր ձևավորվել նաև այն անբեկանելի քաղաքական համոզմունքը, որ ազգային ազատ, անկախ պետականություն ունենալու և այն պաշտպանելու համար առաջին հերթին պետք է ապավինել ազգի հավաքական գիտակցությանը, **սեփական ուժերին** ու կարողականությանը: Անգամ մեր օրերում արդի լուրջ մարտահրավերների պայմաններում դժվար է ասել, թե մեզանում որքանով են անշրջելի դարձել հայ հանրության ու պետական իշխանավորների քաղաքական այդ մտածելակերպն ու գործելակերպը:

**Արարատ Մ. Հակոբյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայաստանի 20-րդ դարի քաղաքական պատմության առանցքային հիմնահարցերը: Հեղինակել է բազմաթիվ մենագրություններ Հայաստանի Հանրապետության 1918-1920 թթ. պատմության, այդ շրջանում գործող քաղաքական կուսակցությունների, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի, 1937 թ. քաղաքական բռնաճնշումների վերաբերյալ:

Էլ. հասցե՝ ararathakobyan47@gmail.com

Summary

## ON THE ISSUE OF THE INCEPTION OF THE RUSSIAN ORIENTATION OF ARMENIANS

The true story of Israel Ori's life and activities

Ararat M. Hakobyan

*Doctor of Sciences in History*

**Key words** – Israel Ori, Angeghakot, Vienna, Johann Wilhelm, K. Yezyan, Ash. Hovhannisyan, Elector, “Palatinate Program”, Melik Safraz, Leopold I, Pope of Rome, Persia, orientation, Moscow, Peter the Great, F. Golovin, “Moscow Project”.

The outstanding figure of the Armenian liberation movement and struggle of the late 17<sup>th</sup> and early 18<sup>th</sup> centuries – Israel Ori, with his selfless, but contradictory, sometimes adventurous life and activities, is considered the firstborn (herald) and initiator of the Russian political orientation of the Armenian people. On his way from the West to Russia, he sometimes resorted to falsification of documents in order to arouse the interest of Russian political leaders and encourage them towards the issue of the liberation of Armenia. Documentary records of his Western Russian political, negotiating, diplomatic activities, two “Palatinate” and “Moscow” plans for the liberation of Armenia, although unrealistic for the time, are considered an innovation in the history of the Armenian political thought. He was the first figure who brought the Armenian liberation movement and diplomatic negotiations out of the religious-confessional level (diaper) of the clergy and put them on the military-political foundations of a practical, secular content.

The ultimate goal of the liberating ideas of I. Ori was the complete liberation of Armenia from the Persian-Turkish tyranny and the creation of an autonomous Armenian statehood (kingdom) initially under the auspices of the Western European powers, and then of Russia, as evidenced by the two programs he drew up, as well as the map of Great Armenia presented to Tsar Peter.

A valuable documentary collection compiled by philologist, historian K. Yezyan, and other supporting materials enable us to conclude that **the beginning of the Russian orientation of the Armenians is considered not the second half of the 17<sup>th</sup> century and not even the turn of the 18<sup>th</sup> century, but the 1720s, i. e.: the time when in anticipation of the so-called Caspian campaign of Peter the Great, the liberation struggle of Artsakh and Syunik flared up.**

All this means that the Russian political orientation of the Armenian people has a history of **three centuries**. But this does not mean that the Armenians unanimously stood on the positions of this orientation. Historiographical objectivity requires noting that due to the dictates of the times and circumstances, especially at the end of the 19<sup>th</sup> and beginning of the 20<sup>th</sup> century, in particular, during the discussion of the Armenian issue, the Armenian socio-political circles mainly and involuntarily represented other – Western orientations, but in both cases did not achieve significant positive results.

At the same time, it should be noted that there is no need to put a big barrier in the issue of the Western European and consequently Russian political orientation of the Armenian people, since already Russia of Peter the Great with its system of political, state-legal and cultural values aspired to become a European country. And as for the liberation of Armenia, in practical terms it was closer to Armenia, and the latter's liberation by Russia was more realistic. In other words, if we compare and evaluate the missions of the two political directions of Israel Ori, then from the viewpoint of civilizational orientation, in a broad sense it can be considered **European-Russian**.

A comparative analysis of documentary materials and historical-political events of the region indicates that during the era of Israel Ori, Armenia still had no real prospect of practical liberation with the support of foreign forces, neither by Russia nor, even more so, by Western countries. In the era of Israel

Ori, the Armenian people had not yet developed an indestructible political concept that in order to have a free, independent national state and protect it, one should first of all rely on the collective consciousness of the nation, on its **own strengths** and capabilities. And from the perspective of learning advisable historical lessons, even now, during the Third Republic, in the conditions of modern serious challenges, it is difficult to say how irreversible the political mentality and the way of actions of the Armenian public and the state power have become among us regarding the independent statehood and defense of the Motherland.

Резюме

## К ВОПРОСУ О СТАНОВЛЕНИИ РУССКОЙ ОРИЕНТАЦИИ АРМЯН

Реальная история жизни и деятельности Исраэла Ори

Арапат М. Акопян  
*Доктор ист. наук*

**Ключевые слова** - Исраэл Ори, Ангехакот, Вена, Иоганн Вильгельм, К. Езян, Аш. Ованнисян, курфюрст, «Пфальцская программа», Мелик Сафраз, Леопольд I, Папа Римский, Персия, ориентация, Москва, Петр Великий, католикос Есаи, Армения, «Московская программа».

Выдающийся деятель армянского освободительного движения конца XVII-начала XVIII в. Исраэл Ори с его самоотверженной, но противоречивой деятельностью и полной приключений жизнью, считается основоположником (первопроходцем) и инициатором русской политической ориентации армянского народа. С целью вызвать заинтересованность российских правящих кругов к вопросу освобождения Армении и ее переориентации от Запада к России, ему иногда приходилось прибегать даже к фальсификации документов. Документальные подтверждения его дипломатической деятельности, «пфальцские» и «московские» программы освобождения Армении, хотя мало реалистичны для своего времени, но считаются новаторскими в истории армянской политической мысли. Он был первым деятелем, который вывел армянское освободительное

движение и дипломатические переговоры с религиозно-конфессионального уровня духовенства, наполнил светским содержанием и поставил на практическую, военно-политическую плоскость.

Конечной целью деятельности Исраэла Ори было освобождение всей Армении от персидско-турецкой тирании и создание автономной армянской государственности (царства), сначала под протекцией западноевропейских держав, а затем – России, о чем свидетельствуют составленные им две программы, а также карта Великой Армении, подаренная Петру Великому.

Изучение материалов ценного документального сборника, составленного филологом и историком К. Езяном, и других источников позволяют сделать вывод, что **началом русской ориентации армян считается не вторая половина XVII в. и даже не рубеж XVIII в., а 1720-е гг., т.е. время, когда в ожидании Каспийского похода Петра Великого разгорелась освободительная борьба армян Арцаха и Сюника.**

Это означает, что русская политическая ориентация армянского народа имеет **трехвековую** историю. Но это не значит, что в течение этого времени армяне постоянно стояли на позициях русской ориентации. Соблюдая научную объективность следует отметить, что в силу веяний времени и обстоятельств, в конце XIX и начале XX века, в ходе обсуждения Армянского вопроса армянские общественно-политические круги часто руководствовались другими (западноевропейскими) ориентирами, но не добились существенного положительного результата.

Вместе с тем следует отметить, что нет необходимости ставить барьеры между двумя направлениями политической ориентации армянского народа, сначала – западноевропейской, а затем русской, ибо уже Петровская Россия с ее системой политических, государственно-правовых и культурных ценностей стремилась стать европейской державой. Но в практическом плане - задача освобождения Армении с помощью географически близкой России, т.е. русская политическая ориентация, была более реалистичным. Другими словами, если сравнивать и оценивать две политические миссии Исраэля Ори, то его позицию по вопросу ориентации армянского народа с точки зрения цивилизационного содержания в широком смысле можно считать **европейско-русской.**

Сравнительный анализ документальных материалов показывает, что в рассматриваемый период, в годы активной деятельности Исраэла Ори, у

